№ 29 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8

1906

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 № 29

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պահանջում են. Հայոց հարցը և Հաագայի կօնֆերենցիան. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Ղազախի գաւառի սարսափներից. Միտքը քարացել է Պետական դումայի ընտրութիւնները Կովկասում Տէսլէնկօի զեկուցումը. Քաղաքային դումայի նիստը. Բողոք հայ հասարակութեան. Նամակ Ղլարից. Նամակ Կարսից Դոքձեալ կենտրօնացման և ֆեդերացիայի խնդիրը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Ֆրանս-գերմանական ընդհարում. Նամակ Պարսկաստանից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ

«Մշակի» մէջ տպված վերջին հաղորդագրութիւնից մեր ընթերցողները տեղեկացան, որ Ղազախի գաւառում զգացվում է բժշկական օգնութեան պակասութիւն:

Եթէ չեն մոռացել մեր ընթերցողները, նոյն գանգատն արել էին և Զանգեզուրի և միւս գաւառներից:

Մեր ստացած ուրիշ տեղեկութիւններն էլ ցոյց են տալիս, որ շատ անմխիթարական է մեր ազգաբնակութեան առողջական դրութիւնը այն շրջաններում, ուր տեղի են ունեցել սուր ընդհարումներ հայերի և Թուրքերի մէջ:

Կոտորածներից ազատված հայերը ապաստարան և պատսպարան գտնելուց յետոյ, տուել են մահացութեան չափազանց շատ դէպքեր:

Թէ հասակաւորների և թէ փոքրահասակների մէջ տարածվել են նաև վարակիչ հիւանդութիւններ, որոնք խլել են բազմաթիւ զոհեր:

Օրինակ, Բաղա գիւղի բնակիչները, որոնք ապրում են զանազան գիւղերում, շատ յաճախ ակարանում են և դժուարութեամբ կազդուրվում: Ի՞նչն է պատճառը. արդեօք այն, որ նրանք սովոր չեն ուրիշ օդի ու ջրի, արդեօք նրանց վրա ծանր է ազդում այդ հոգեկան յուզված դրութիւնը, որի մէջ նրանք ընկել են, թէ այն զրկված կեանքը, որով նրանք ապրում են, կամ թէ գուցէ բոլոր պատճառները միասին:

Յամենայն դէպս, մի բան անկասկած է, որ «գաղթական» հայերը ապրում են անտուն, անբնական պայմանների մէջ, մեծ կարիքի և զրկանքների մէջ: Գիւղացի մարդը իր սեփական տանն էլ երբեք ճոխ չէ ապրում և նրա կեցութիւնը միշտ մօտ սահմանակից է լինում այն դրութեան, որ կոչվում է զրկանք: Իսկ երբ հանգամանքները ստիպում են, որ նա աւելի ևս զրկված ապրի, աւելի ևս իրան նեղի, տանջի, այն ժամանակ կազմուածքը սկսում է թուլանալ, քայքայվել և ենթակայ դառնալ հիւանդութիւնների:

Այդ Թշուառացած հայութեան բժշկութիւնը պէտք է լինի ոչ միայն զուտ բժշկական այլ և աւելի ընդարձակ օգնութեան եղանակով:

Այնտեղ, ուր մարդ ապրում է օրերով կիսաքաղցած վիճակի մէջ, այնտեղ, ուր տաք հագուստի, վերմակի, յարմար բնակարանի և լաւ սնունդի բացակայութեան պատճառով (ինչպէս այդ տեղի ունի Նախիջևանի գաւառի մի քանի մասերում, օրինակ Նորսի կողմերում), ինչպէս կարելի է հիւանդութիւնների դէմ մաքառել միայն բժշկական օգնութեան միջոցով:

Շատ պարզ է, որ բժշկական օգնութիւնը պէտք է գործէ շաղկապված աւելի ընդարձակ օգնութեան հետ, որ նպատակ դրած լինի բարեփոխել մարդկանց կենցաղի եղանակը:

Ընդգծելով ընդարձակ և հիմնական օգնութեան կարևորութիւնը և նշանակութիւնը, մենք կը ցանկանայինք, որ ներկայ բոպէում զուտ բժշկական օգնութեան համար պակասութիւն չը զգացվի գործողների մէջ: Բժիշկներ պահանջվում են անմիջապէս, առանց յետաձգելու, որովհետև երկիւղ կայ, թէ վարակիչ հիւանդութիւնները կարող կը լինեն մեծ զոհեր խլել մեր Թշուառացած եղբայրներից: Բժիշկները մի և նոյն ժամանակ, կարող են հանդիսանալ և իբրև լաւ գործողներ կազմակերպելու ընդհանուր, աւելի լայն, օգնութեան գործը գաւառական շրջաններում:

Բժշկական օգնութեան գործը պէտք է գրաւէ նոյնպէս մեր համալսարանական բժիշկ ուսանողներին, որոնք այժմ ազատ են ուսումից և գտնվում են մեր երկրում: Նրանց համար ասպարէզ կայ թէ ժողովրդական շրջաններում արդիւնաւէտ գործելու և թէ հերթական կարիքի բաւարարութեան նպաստելու:

Թող մեր բժիշկները և բժշկութիւն սովորող ուսանողները հանդէս գան իրանց գործունէութեամբ:

Նրանց օգնութեան կարօտ է ժողովուրդը:

Ա. Քալանթար

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱԱԳԱՅԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

Բազմաթիւ են և բազմազան այն ջանքերը, որ թէ հայ գործիչներ թէ եւրոպական հայասէրներ գործ դրին մինչև այսօր հայոց հարցը կամ Թշուառ Հայաստանի մէջ ռեֆորմներ մտցնելու հարցը լուծել տալու խաղաղութեան, իրաւարարութեան ճանապարհով, եւրոպական պետութիւնների և ազգերի արդարադատութեան զգացմունքներին հանդիսաւոր կոչ անելով: Դեռ Հաագայի առաջին կօնֆերենցիայի գումարման ժամանակ ջանքեր եղան, որ կօնֆերենցիան քննութեան ընդունէ նաև հայոց հարցը, քանի որ նրա լուծման յետաձգումը ուղղակի վտանգ է սպառնում համաշխարհային խաղաղութեան:

Դժբախտաբար, բոլոր այդ ջանքերը, մարդասիրական ձգտումները ապարդիւն անցան: Թշուառ Հայաստանի դրութիւնը օրէց օր վատթարացաւ և Թշուառ հայ ժողովրդի վիճակը Թիւրքիայում ուղղակի դժոխք դարձաւ: Եւրոպական մարդասէրների և հայասէրների ամեն մի կոչը, ամեն մի միջամտութիւնը յօգուտ հայերի, Գլադստօնի, Ժօրէսի, Պրեսանսէի Թիւրքական վայրագ և զարշելի ռեժիմը խարազող ամեն մի ճառը իր հակառակ ազդեցութիւնն էր գործում Հայաստանում նրանով, որ Կարմիր Սուլթանը նոր կոտորածներ էր կազմակերպում:

Եւ տարօրինակ բան՝ նրանք, որոնք Հայաստանի Թշուառութիւնը և կրած սարսափները վերագրում էին երիտասարդութեան յեղափոխական գործունէութեան և քարոզում էին շարունակ թէ յեղափոխական գործունէութիւնն է յանցաւոր և նա է արգելք հանդիսանում Հայաստանի մէջ ռեֆորմներ մտցնելուն, ոչ թէ համակրում էին հայոց հարցը խաղաղասիրական-իրաւարարական ճանապարհով լուծելու համար արած ջանքերին, այլ ընդհակառակը, դարձեալ աղմուկ և աղաղակ էին բարձրացնում թէ այդ ջանքերը, ճառերը, դիմումները, կոչերն են պատճառը, որ հայերի վիճակը Հայաստանում վատթարանում է:

Տարակոյս չը կայ, որ թէ առաջին և թէ երկրորդ աղաղակը միայն մի նպատակ ունէր—խեղդել բողոքի, զայրոյթի հզօր ձայնը, որ թնդում էր ամեն կողմից համիդական վայրագութիւնների դէմ, խեղդել հայոց հարցը նոյն իսկ իր արտայայտութիւնների ամենաանմեղ ձեւերի մէջ:

Այժմ, Հաագայի երկրորդ կօնֆերենցիայի առաջիկայ գումարման առիթով նորից արծարծվել է հայոց հարցը իրաւարարական եղանակով, այդ կօնֆերենցիայի միջոցով լուծելու հարցը և Եւրոպայում, Ամերիկայում թէ հայ գործիչների, թէ հայասէրների կողմից ջանքեր են լինում մտցնել տալու հայոց հարցի քննութիւնը կօնֆերենցիայի օրակարգի մէջ: Այդ ջանքերին մի հզօր զարկ տուեց այն հանրագիրը, որ Եւրոպայի նշանաւոր խաղաղասէրները, գիտնականները, պետական և հասարակական գործիչները, ղեկավարութեամբ հռչակաւոր գիտնական Բերտօլէի, ներկայացրին Միացեալ-Նահանգների նախագահ Րուզվելտին, որից, ի հարկէ, շատ բան է կախված: Եւ մեծ յոյս կայ, որ իր խաղաղասիրական գործերի համար մարդկութեան երախտագիտութեան արդէն արժանացած Թէոդոր Րուզվելտին աջողվի Թշուառ Հայաստանի և երբեմն Թշուառ Թիւրքահայ ժողովրդի երախտագիտութիւնն ևս ձեռք բերելու և իր բարոյական հեղինակութեամբ, մանաւանդ Ռուսաստանի և Անգլիայի աջակցութեամբ լուծել տալու մի հարց, որ այնքան արիւնահեղութեան և անմեղ զոհերի պատճառ դարձաւ, ի մեծ նախատինս եւրոպական քրիստոնէական քաղաքակրթութեան:

Բայց այժմ նորից սկսել են թնդալ ձայներ և ծաղրեր այդ ջանքերի դէմ: Կան և այնպիսիները, որոնք խիստ պեսսիմիստ լինելով, ոչ մի հաւատ չեն ընծայում, որ հայոց հարցը կարող է երբ և իցէ լուծվել խաղաղասիրական եղանակով և տրամադիր են նկատելու այդ ջանքերի մէջ՝ պախարակումն յեղափոխական գործունէութեան ի նպաստ հայկական հարցի:

Հարկ չը կայ ասելու, որ այդ վախերը անտեղի են: Հայոց հարցին փոքր ի շատէ ծանօթ անձն երբեք չէ կարող պնդել, որ մեր բոլոր յոյսերը պէտք է դնենք Հաագայի կօնֆերենցիայի վրա ոչ, մենք այնքան լաւատես չենք, բայց աջակցելով Եւրոպայի հայասէրների ջանքերին, ցանկանալով, որ հայոց հարցը ենթարկվի միջազգային պաշտօնական կօնֆերենցիայի քննութեան և լուծման, մենք կամենում ենք շեշտել, որ մեր հայերիս նպատակը չէ եղել և չէ անպատճառ յեղափոխական ճանապարհով բարուօքել մեր Թշուառ եղբայրների դժոխային վիճակը Թիւրքահայ Հայաստանում:

Միայն յուսահատութիւնը և ուրիշ ելք չը գտնելն է պատճառ, որ ստիպել է հային դիմել յեղափոխական գործունէութեան, իր կեանքը, գոյքը, պատիւը պաշտպանելու և մարդկային տարրական իրաւունքներ ձեռք բերելու համար:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւուզ, 6 փետրվարի, 6 ժ. 8 ր.:

Թաւուզի կայարանը բերված են 24 կրգանցիներ գերիներից. ուղարկում են Թիֆլիս:

Ղազախ, 5 փետրվարի, 9 ժ.

Գաւառապետի օգնական Պուշկինը մի վաշտ դրագունններով այսօր գնաց Շամշադինը զինաթափ անելու:

Գանձակ, 7 փետրվարի

Փետրվարի 5-ին, երեկոյեան ժամի 10-ի մօտերքը երեք զինված Թուրքեր, կոտրելով Կօլեսին պահապանի բուդկայի երկու դռները, մտան ներս և կողոպտեցին բոլորովին: Պահապան կինը, լուսամուտից դուրս ցատկելու ժամանակ, վէրք ստացաւ: Մարդատար գնացքը №5, կանգնեցրվեց կարմիր ազդանշանով: Զինւորները հրացաններ պարպեցին փախչող աւազակների վրա:

Կովկասի Փոխարքան ստացել է հետևեալ հեռագիրը.

Երևան, 5 փետրվարի.

«Այս երկու շաբաթվայ ընթացքում խաղաղութիւնը նահանգում խախտված է միայն Նախիջևանի գաւառում, որտեղ Թուրքերը յարձակվել են Ջուլֆի երկաթուղու գծի բարակի վրա, որ գտնվում է 5 վերստի վրա Նախիջևանից: Միւս գաւառներում առանձին տխուր պատահարներ տեղի չեն ունեցել: Միջոցներ եմ ձեռք առնում դաշտային աշխատանքները սկսելու համար կարգը պահպանելու, ուստի փոքրիկ խմբերով զօրքը բաժան բաժան անելու փոխարէն, ուղարկում եմ փոքրիկ զօրամասեր, հետևակ զօրքից և կօզակներից կազմված, անցած տարվայ ընդհարումների վայրերը, զինուորական զբօսանքներ կատարելու և յայտարարելու ազգաբնակութեանը այն մասին, թէ ինչպիսի ծանր հետևանքների կենթարկվեն, եթէ որ ընդհարումները վերսկսվեն և որ զօրամասերը ստիպված կը լինեն վերադառնալ անկարգութիւնները զսպելու համար»:

Գեներալ-լէյտենանտ Եացկէվիչ:

Ղազախից եկածները մեզ պատմում են, որ գնդապետ Լեվիցկու կարգադրութեամբ Ղազախի ամբողջ գաւառը բաժանված է ութ մասի, որոնցից իւրաքանչիւրում զօրքի յատուկ խմբակներ պէտք է խուզարկութիւններ անեն ազգաբնակութիւնը զինաթափ անելու նպատակով:

Հայերը հաշտութեան առաջարկներին վերաբերվում են մեծ պատրաստականութեամբ և կարծես գնդապետ Լեվիցկու մէջ սկսում է ամրանալ այն համոզմունքը, որ հայերը ամենևին տրամադիր չեն ընդհարումներ առաջ բերելու և եթէ դիմում են զէնքի՝ միայն դիմադրելու նպատակով:

Բագուից երեկվայ եկողները պատմում են, որ այնտեղ բոլորովին հանգիստ է և սև օրերի տարեդարձը ամենևին չէ մթագնված չարագուշակ սպառնալիքներով:

Բագւում սկսել է նորից եռալ նաւթարդիւնաբերական կեանքը և նաւթահանքերի երկու երրորդական մասը արդէն գործի մէջ է:

Հայերը ամսիս 4-ին տուին մի մեծ երեկոյթ Հայոց Մարդասիրական Ընկերութեան օգտին: Գոյացաւ մօտ 4000 րուբլի զուտ արդիւնք:

Եւլախ, 6 փետրվարի.

Այստեղ արդէն սկսել են հայեր երևալ: Թուրքերն էլ յոգնել են ընդհարումներից, բայց փոխադարձ վստահութիւնը դեռ կատարեալ չէ:

Թէհրանից հեռագրում են մայրաքաղաքի լրագիրներին, յունվարի 28-ին.

«Գրեթէ միաժամանակ Մէշէդում, Ռաշտում, Թէհրանում և ուրիշ քաղաքներում դիտմամբ տարածվում են լուրեր, թէ հայերը Բագւում թունաւորում են Պարսկաստան ուղարկվող շաքարը: Այս անհեթեթ լուրերին հաւատում են ժողովրդի ստորին խաւերը, ուստի և նրանք սկսել են շաքարի տեղ գործ ածել մեղր»:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Օքրօպակերտ, (Շաւշէթի գաւառ,) 29-ին յունվարի: Շաւշէթ գաւառակը ունի 48 գիւղ տաճիկներ և երկու գիւղ հայեր, որոնք են Օքրօպակերտը և Սաթշէշը:

Այս գաւառը ընկած է լեռների մէջ: Ձմեռ ժամանակ ձիւնը փակում է ճանապարհները և շատ անգամ ամիսներով կտրվում է ժողովրդի յարաբերութիւնը 3 օրվան ճանապարհ հեռու քաղաքների հետ: Գաւառիս շրջապատող քաղաքներն են Ախալցխան, Արդուինը և Արդահանը. վերջինս գտնվում է 8 ժամ հեռաւորութեան վրա, բայց միջև գտնված մեծ սարը անջատում է ձմեռը այդ մերձակայ քաղաքի յարաբերութիւնից ևս: Ամբողջ գաւառի մէջ մի գաւառատուն կայ և մի գաւառապետ իր մի քանի Թուրք ոստիկաններով: Ծանօթացնելով «Մշակի» ընթերցողներին մեր գաւառի հետ, աւելորդ չեմ համարում յայտնել, որ մեր հարևան Թուրք ժողովուրդը միշտ համերաշխ է ապրել հայերիս հետ:

Անցեալ տարվայ դառն իրականութեան հեղինակներից գաւառիս զանազան գիւղերում նկատելի եղել են մի քանի չար ոգիներ, բայց խաղաղասէր մարդկանց շնորհիւ հալածվել են այս վայրերից: Այժմ ևս ինչ որ խլրտումներ կան Թուրք գիւղերում, ինչպէս լսում ենք, գաւառիս բէգերի ձեռներէցութեամբ զանազան Թուրք գիւղերում շրջակայ գիւղերից համախմբվելով գաղտնի ժողովներ են լինում: Չըգիտենք մեր Թուրք հարևանների համախմբումները ինչ հետևանք կունենան:

Պետրոս Պօղ. Տէր-Յարութիւնեան

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Կովկասի Փոխարքային հեռագրում են.

«Քութայիս, 5 փետրվարի: Օզուրգէթի գաւառում նորակոչ զինւորների ընդունելութիւնը սկսվեց: Արդէն յանձնված են զօրամասերին 369 հոգի, իսկ պակասում են 10 հոգի:»—Նահանգապետ Օսէցկի:

Բաթում Գուրիայից եկողներն ասում են, որ յունվարի 31-ին զօրքը մտել է Նազամաբի: Այրվել են մի շարք խանութներ: Այրվել են Նազամաբի շրջակայ գիւղերը: Մինչև այսօր ընդամենը այրվել են մօտ 500 տներ: Հրդեհվել են տներ Բազվում, Ասյանալում, Ասկանալում և Ակէթում:

Այստեղ կալանաւորեցին մօտ 100 մշակներ: Կալանաւորվածները օրավարձի աւելացնելն են պահանջել գործարանատէրից:

Բաղդատից և շրջակայ գիւղերից արդէն գալիս են երիտասարդ մարդիկ կոռ ու բեգարի համար: Այսօր կալանաւորեցին պօստային պաշտօնեաներ՝ Բրէգվաձէին, Ֆրանգուլեանցին և Վէշապիձէին:

Վաղը կանչված են ոստիկանութեան պաշտօնեաները գեներալ Ալիխանովի մօտ: Նրանց կանչելու նպատակն է տեղեկանալ, թէ ո՞րպիսի հանգամանքներում են կորել ոստիկանութեան զէնքերը և ո՞վ է մեղաւոր այդ գողութեան մէջ:

Այս օրերս, ասում են, լինելու են արտիլերիական «մանեօվրներ» և այդ պատճառով զգուշացնում են բնակիչներին, որ չը վախենան հրացանաձգութեան և թնդանօթաձգութեան ձայնից: Չեմ կարող երևակայել, թէ այլ և ինչ բան կարող է վախեցնել քութայիսցիներին:

Յունվարի 14-ին կալանաւորված երգչական հաւատարմատար Մոսէ Քօքիձէ, 60 տարեկան ծերունին, որպէս մեզ հաղորդեցին, հիւանդացել է: Ինչպէս երևում է բանտային կեանքը չէ կարողացել տանել ծերունի և տկար Քօքիձէն:

Գեզամօվին վիրաւորելու օրից մինչև այսօր քաղաքի փողոցներում շրջում են հետևակ զինւորների պատրուլներ, իսկ գիշերները դուրս են գալիս կօզակները:

Քաղաքի փողոցները, երեք ամիս շարունակվող խաւարից յետոյ, մի կերպ արժանացան լոյսի: Այս չորրորդ օրն է, որ քաղաքային վարչութիւնը սկսել է լուսավառել փողոցները:

Յունվարի 7-ին: Կվիրիլ-Սամտրէդիի գործադուլ արած բանւորները սկսեցին աշխատել: Գիւղաքաղաքը դատարկվեց, փախան գիւղերը: Շատերն էլ խանութները դատարկեցին և ապրանքները գիւղերը տարան:

Յունվարի 8-ին: Երեկոյեան 3 ժամին եկաւ առաջին զինւորական գնացքը: Կայարանում ոչ ոք չը դիմաւորեց: Հէնց որ կանգ առաւ գնացքը, կօզակներն եկան կայարան և մի քանի անգամ հրացաններ արձակեցին օդում: Այդ ժամանակ երկու մարդ գնում էին կայարանի մօտերքը: Հրացանաձգութիւնը վախեցրեց նրանց և սկսեցին փախչել: Նրանց ետևից վազեցին երկու կօզակներ: Փախչողներից մէկին սպանեցին, միւսին վիրաւորեցին: Առաջին գնացքը գնաց Սվիրիի կողմը: Ժամը 4-ին երկրորդ գնացքն եկաւ պլատոններով: Հէնց որ դուրս եկան գնացքից, իսկոյն ներս խուժեցին խանութները. ապա հրդեհ սկսեց Արաբիձէի խանութում: Այնտեղից կրակը տարածվեց և ուրիշ խանութների վրա և ընդամենը այրվեցին 20 խանութ: Առաւօտեան պլատոնները հեռացան:

Յունվարի 9-ին: Ժողովուրդն սկսեց գաղթել դէպի գիւղերը: Երեկոյեան 3 ժամին եկաւ երրորդ զինւորական գնացքը պլատոններով, դրանց հետևեցին չորրորդ, հինգերորդ և վեցերորդ գնացքները: Հէնց որ կանգ առան դրանք, իսկոյն հրդեհվեցին մնացած խանութներն ևս: Այդ գիշեր այրվեցին՝ Թատրոնը, բանկը, գրադարան-ընթերցարանը, տպարանը, դեղատունը և տներ ու խանութներ: Քարուքանդ արին Մաճավարիանիի տունը, որովհետև մի հրացան գտան այնտեղ: Հաւաքեցին բնակիչներին և պահանջեցին, որ յանձնվեն իրանց պարագլուխները, ագիտատօրները և յեղափոխականները: Մի քանիսը ագիտատօրների անունները տուեցին: («Ցնօբ. Փուրցէլի»):

ՄԱՄՈՒԼ

«Новое Время» լրագիրը նորից լայն կերպով բացել է իր սիւնակները ռուս նացիօնալիստների և «հայրենասէրների» զրպարտութիւնների և բանսարկութիւնների առաջ: Նորից «Ռուսաստանի հաւատարիմ զաւակները» սկսել են գոռալ, որ հայրենիքի բոլոր դժբախտութիւնների պատճառը—այդ անիծեալ ջհուդներ, հայեր և լեհեր են: Այժմ դրանց Թւին աւելացնում են և ֆինները: Զը լինեն ջհուդները, հայերը, լեհերը, ֆինները—Ռուսաստանում դրախտ կը հաստատվի և գառները գայլերի հետ կը ճարակեն: Եւ որովհետև հայերին Կովկասում, ըստ «Новое Время» լրագրի զրպարտիչների, երես է տալիս կոմս Վօրօնցօվ-Դաշկօվը, ուստի այդ զրպարտիչները չեն քաշվում նոյն իսկ արշաւանք սկսել Փոխարքայի դէմ: Այդ արշաւանքի նմուշները տեսանք այն յօդուածների մէջ, որ այնքան փայլուն կերպով հերքեց տեղական «Кавказъ» լրագիրը:

Այժմ ռուս «հայրենասէր» թերթը արշաւանք է սկսել և Ֆինլանդիայի նոր ընդհանուր-նահանգապետ Ն. Հերարդի դէմ: Ահա ինչ է ասում այդ մասին «Новости» լրագիրը.

«Սկսվել է մի վայրենի, կատաղի յարձակումն մի ամբողջ ժողովրդի, նրա գործիչների, դրանց հետ և երկրի գլխաւոր կառավարիչ Հերարդի դէմ:

Հազիւ երկիրը կարողացաւ մի քիչ ազատ շունչ քաշել «Ռուսաստանի հաւատարիմ զաւակների» ռուսականացման սարսափի ռեժիմից, այն է Բօբրիկօվի և ընկ. ռեժիմից, որոնք, ըստ «Нов. Время» լրագրի, իրանց արիւնով կնքեցին իրանց անձնազոհութիւնը ռուսական գաղափարին, հազիւ երկիրը կարողացաւ իր ընդարմացած անդամները ուղղել և ահա ֆիննատեաց պօլիտիկանները նորից բարձրացնում են իրանց գաւազանը նրա գլխին...

Նորից արթնանում են մութ ոյժերը և կոչ են անում իշխանութեան, խնդրելով Թագաւորից վերցնել ազատված Ֆինլանդիան Բօբրիկօվեան քաղաքականութեան հովանու ներքոյ: Այնպէս, իբր թէ, Ռուսաստանին վտանգ է սպառնում...

Փրփուրը բերանին «Нов. Время» խօսում է Ֆինլանդիայի վերաբերմամբ գործադրվող ամեն մի ազատամիտ միջոցի մասին, իսկ Ն. Հերարդին նա ուղղակի ասում է, անուանելով ֆիններին բարեացակամ նրա քաղաքականութիւնը՝ դաւաճանութիւն Ռուսաստանի դէմ: Միակ կանոնաւոր շաւիղը ֆինների վերաբերմամբ, լրագրի կարծիքով—դա Բօբրիկօվի գծագրած շաւիղն է:

Մենք մեր առաջ ունենք նոր, դրականապէս զզուելի ոտնձգութիւններ այդ լրագրի կողմից՝ սևացնելու և տիղմի մէջ թաթախելու Ն. Հերարդին, իբրև դաւաճանի»:

Իբրև ապացոյց «Новости» առաջ է բերում «Нов. Время»-ում տպված մի քանի յօդուածներ, որոնց նպատակն է ցոյց տալ, թէ Ֆինլանդիայում ահագին զէնք է մտցնվում ապստամբութեան համար և ընդհանուր-նահանգապետ Հերարդը ոչ մի արգելք չէ դնում:

«Н. Вр.»-ի քաղաքականութիւնը, շարունակում է «Новости», ուղղակի՝ ալարմիստական է: Լրագրի յարձակումները Հերարդի վրա իսկապէս նոյն բնաւորութիւնն են կրում, ինչ և նրա արշաւանքը Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի դէմ:

*

Ջհուդների, հայերի և լեհերի մասին, ինչպէս կարդում ենք մայրաքաղաքի շատ լրագիրների մէջ, խօսել է և մինիստր-նախագահ կոմս Վիտտէն: Յունվարի 22-ին, կոմսին ներկայացաւ Եկատերինօդարի մէշչանների կողմից մի պատգամաւորութիւն, որի հետ կոմսը երկարատև խօսակցութիւն ունեցաւ: Այդ խօսակցութիւնը մանրամասն տպվեց գրեթէ բոլոր լրագիրներում, բայց նրա մի քանի կէտերը այնքան անհաւանական էին, որ շատերին անհաւատալի թուաց: Դժբախտաբար մինչև այսօր ոչ մի պաշտօնական հերքումն չերևաց, ուստի և «Новости» ինչպէս և «Вѣкъ» լրագիրները հարկ են համարում քննադատութեան ենթարկել այդ կէտերը:

Ահա ամենից շատ տարակուսանք յարուցանող խօսակցութեան կէտերը:

Պատգամաւորութեան մի հարցմունքին կոմսը ասել է հետևեալը.

—Չէ որ մեզ մօտ, փառք Աստուծոյ, այնպէս չէ, ինչպէս ուրիշների մօտ: Ֆրանսիայում նախագահը պէտք է մտածէ այն մասին, թէ արդեօք կընտրվի նա. նա կախված է ընտրողներից: Անգլիայում «Թագաւորը կախված է ջհուդական բանկիրներից», իսկ մեզանում Թագաւորը ոչ ոքից կախումն չունի:

«Իսկ յեղափոխականները կամենում են, որ Ռուսաստանը կառավարեն լեհերը, հայերը և ջհուդները:» Բայց այդ չի լինի: Չէ որ այն մեծութիւնը, որ ձեռք է բերել Ռուսաստանը, նա պարտաւոր է բացառապէս ցարերին: Միայն ցարերն են ստեղծել ձեր բարեկեցութիւնը. առանց նրանց, դուք մինչև այսօր գիւղացիներ կը լինէիք, իսկ այժմ դուք, օրինակ, սիւրտուկ ունէք հագած: Եւ եթէ չը լինէր այս դժբախտ պատերազմը—ահ, ինչ կը լինէր մեզ մօտ: Եթէ մենք յաղթող միայն դուրս գայինք... Բայց Աստուած չը կամեցաւ»:

Կոմս Վիտտէի այս խօսքերը այնքան անհաւանական են Թւում, որ նոյն իսկ «Нов. Вр.» լրագիրը կասկածում է, որ նա այդ խօսքերը արտասանած լինի:

*

Կովկասի դէպքերի մասին «Рус. Вѣд.» լրագիրը գրում է.

«Թէև գեներալ Ալիխանովը արդէն շատ վաղուց զեկուցել է Փոխարքային, որ Քութայիսի նահանգը խաղաղվել է և Փոխարքան հաղորդել է այդ լուրը իբրև բոլորովին արժանահաւատ, բայց դէպքերի յետագայ ընթացքը ոչ բոլորովին արդարացրեց գեներալի լաւատեսութիւնը: Նոյն իսկ հեռագրական գործակալութիւնների հաղորդած տեղեկութիւններով, ապստամբութիւնը դեռ չէ զսպված:

Հայ-Թուրքական կռիւները նոյնպէս շարունակվում են, թէև կան, ըստ երևոյթին, նշաններ, որոնք գուշակում են մի փոքր խաղաղացումն: Այս անգամ միակ Թուրքերը չէին յարձակվող կողմն: Շուշին, որ պաշարվել էր Թուրք հրոսակախմբերով, ազատվեց ռուսական զօրախմբի ձեռքով և Թշնամութեան գլխաւոր բեմի վրա, Շուշի գաւառում, հանգստութիւն հաստատվեց: Այդպիսով Պետերբուրգի հայ-Թուրքական խորհրդակցութիւնը կարող է աշխատել պատրաստված հողի վրա: Եւ մենք կը փափագէինք հաւատալ, որ նրա բարեյաջող ելքը կունենայ աւելի լուրջ նշանակութիւն, քան թէ մինչև այսօր կնքված բոլոր հաշտութիւնները: Ընտրութիւնները Պետական Դումայի համար չեն կարող անհնարին համարվել, որովհետև կոմս Սօլսկու յանձնաժողովը այս անգամ կարողացել է գտնել մի լաւ գործնական ելք դժուարութիւններից, ստեղծելով երկու առանձին ընտրական շրջանակներ հայերի և Թուրքերի համար»:

Չը գիտենք Պետերբուրգի որ հայ-Թուրքական խորհրդակցութեան մասին է խօսում լրագիրը. բայց եթէ խօսքը Թիֆլիսում կայանալիք հայ-Թուրքական խորհրդակցութեան մասին է, որ պէտք է կայանայ Փոխարքայի խորհրդին կից, պէտք է ասենք, որ դժուար թէ այդ խորհրդակցութիւնը կայանայ փետրվարի 15-ին, ինչպէս ենթադրվում էր, որովհետև Թուրքերը դեռ չեն ձեռնարկել իրանց ներկայացուցիչների ընտրութեան, իսկ հայերի կողմից ընտրված ներկայացուցիչներից մի քանիսն ևս ձերբակալված են:

*

Բրիւսէլի համալսարանի դասատու Կիւմօնէ հրատարակել է Բրիւսէլի համալսարանի ամսաթերթի մէջ և ապա արտատպել առանձին բրօշիւրով մի աշխատութիւն «Ալժիրի արևելագիտական կօնգրէսը» վերնագրով, որի մէջ զբաղվում է գլխաւորապէս իսլամին վերաբերեալ հարցերով և մանաւանդ այն հարցով, որ անցեալ տարի ապրիլին Ալժիրում կայացած այդ կօնգրէսում յարուցեց Հ. Առաքելեան, այն է «Ղուրանը և ալտրուիստ գաղափարները» կապակցութեամբ Թուրք-հայկական արիւնահեղ ընդհարումների: Իր ռեֆերատի մէջ Հ. Առաքելեան հրաւիրել էր մուսուլման աշխարհի գիտնականներին յայտնել իրանց կարծիքը, թէ մուսուլման կրօնի վարդապետները ինչ մեկնութիւն են տալիս շիա

Թուրքերի ձեռքով Բաքւում կատարված արիւնալի վայրագութիւններին: Պրոֆէսոր Կիւմնէ հրատարակել է Աֆրիկայի մուսուլման գիտնականների տուած պատասխանները Հ. Առաքելեանի դրած հարցերին: Մուսուլման գիտնականները բացատրելով իսլամի էական հիմունքը, աշխատում են ամեն կերպ ցրել այն կարծիքը, թէ ընդհարումները արդիւնք են ֆանատիկոսութեան և ցոյց են տալիս, որ հայերի կոտորածները Թիւրքիայում առաջացրին իրանք հայերը: Իր ժամանակին մենք կը ծանօթացնենք «Մշակի» ընթերցողներին Աֆրիկայի մուսուլման վարդապետների կարծիքների հետ:

*

«Յառաջ»-ի մէջ տպված է դարձեալ մի յօդուած մեր դէմ, այժմ էլ նոր համեմով:

Բայց տոնը փոխվել է և շատ փոխվել:

Ինչպէս յիշում է մեր ընթերցողը՝ այդ լրագրի «Մամուլի» բաժին կազմողը ինքն իրան մի հարց էր տալիս՝ «ծիծաղենք թէ զայրանանք»:

Այժմ ինչ ծիծաղ՝ ինչ զայրոյթ, բոլորը օդն է ցնդել:

Յօդուածագիրը բացատրութիւններ է տալիս միայն:

Եւ աշխատում է «զգոյշ և խոհեմ» լինել:

Ահա ինչով վերջացաւ արհեստական խրոխտանքը:

ՂԱԶԱԽԻ ԳԱՒԱՌԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԻՑ

Բաղանիս, յունվարի 28-ին

25-ի նշանաւոր առաւօտն էր: Հայ Ոսկեպար գիւղը շրջապատված էր հազարաւոր Թուրքերով: Հայ ծերերի, կանանց, երեխաների աչքերից հեղեղի նման արիւն—արտասունք էր թափվում, չար և անգութ գնդակները հազարաւոր մարդկանց, առանց նպատակի, կեանքից զրկում: Հեկեկանքների և գնդակների տարափի մէջ երբեմն լսվում էր երգի ձայն, երգում էին այն մի բուռն կտրիճները, որոնք իրանց դիրքերից սարսափ էին տարածում Թուրքերի վրա, որոնք վճռել էին ապրել մի օր, բայց նամուսով: Կային և այնպիսիները, որոնց համար հարստութիւն, անձնական փառք, հանգիստ ապրելն ունայնութիւն էր. սրանց երջանկութիւնը կայանում էր միայն նրանում, որ կարողանան իրանց պապերի կտակը կատարած լինեն... սրանց երգն էր. «Մենք պէտք է կռւենք և ոչ լաց լինենք, ազգի կորուստը զէնքով յետ խլենք»:

Երգերը ոգևորում էին ամենքին, Թուրասիրաններին առիւծ դարձնում և թշնամու խիտ շարքերը սուր մանգաղի նման հնձում. հնձողներն էին՝ խմբապետներ Շխալի, Սամսոնը և Համօն, զինուորներ՝ Արշակը և Ալեսերը. կռւում էին քաջաբար և միւսները:

Կռւի տաք ժամանակը սպանվեց ամենքին սիրելի Յարութիւնը (զօշողթանցի), որի մահը թանկ էր ամ'նքի համար, բայց ընկերները չը վհատվեցին, այլ աւելի լցվեցին վրէժխնդրութեամբ և ամեն մի արեան կաթիլի փոխարէն մի Թուրք սպանեցին: Մեր քաջերը իրանց նահատակված ընկերոջ գլխին «պսակ» գրին երգելով.

Տեսայ, քոյրիկ, Նախշուն բալէդ
Քարն էր դրեր բարձի տեղ.
Անուշ քնով տաք գնդակն էր
Սրտում դրկեր եարի տեղ...:

Թուրքերը հեղեղի նման գալիս էին Բորչալուի գաւառից, Բեասամանից, Փօսալարից, Զալլուից, Սալահլուից և այլ գիւղերից. 500 ձիաւորներ կամեցան հայերի հարաւային դիրքը շրջապատել, բայց քաջ Եզօրը (զօշողթանցի) երեք կտրիճներով յետ քշեց և 7 հոգի էլ սպանեց: Մութը վերջ դրեց կռւին:

26-ին Թուրքերը նորից սկսեցին յարձակվել և քանի գնում էր, այնքան սրանց թիւը աւելանում էր: Պօլատեան գնդի 6-րդ հարիւրեակի հրամանատարը ասում է, որ Թուրքերի թիւը 10,000 կը լինէր: Հայերին օգնութեան եկող չը կար, որովհետև միւս գիւղերն էլ շրջապատված էին Թուրքերով: Ոսկեպար գիւղում մնացել էին Շխալին, Համօն տասնեակով, որոնք մեծ համառութեամբ կարողացան յետ դարձնել Թուրքերին: Կէսօրին ռազմիրանց դրութիւնը վատանում էր, բայց վրա հասաւ Մեսրոպը իր Գալօյով, այդտեղ էին Միխակը և Ալէքսանը, որոնք բարի հրեշտակներ էին... Թշնամին նորից փախուստի դիմեց, որով և վերջացաւ Ոսկեպարի պաշարումը: Այդ օրը պաշարված էին Կօթի և Դոսալու գիւղերը, որի ժամանակ Թուրքերից սպանվեցին 21 հոգի, իսկ հայերից ոչ մի հատ:

Ամենակատաղի կռիւը Պիպիզի (Զաղալի) մօտ եղաւ. այնտեղ Անձեղեանցը վերջնականապէս քշքշեց Թուրքերի ամենամեծ խումբը:

27-ին եկաւ մեր գիւղը գաւառապետ պ. Բէնոսը մի հարիւրեակ կօզակներով. հաւաքեց ժողովրդին և պատուիրեց, որ այսուհետև վերջ տան խռովութիւններին, որ մեղաւոր կողմը ամենախիստ կերպով կը պատժվի, որ մենք այժմ բաւականին ոյժ ունենք. Ղազախում կայ «օտրեադ», որի հրամանատարն է գնդապետ Լէվիցկին. նշանակեց՝ Սաի գիւղում և Քամարլի պօստեր, որ սրանք ման գան գիւղերը և պատահած դէպքերի մասին յայտնեն իշխանութեանը: Հայերը պատասխանեցին, որ մեր իղձն է խաղաղութիւն, մենք խնդրում ենք անաչառ կերպով պատժել մեղաւորին: Թուրք գիւղացիք հեռանում են, որը վատ նշան է. երևի ուզում են միացեալ ոյժերով յարձակվեն: Տեսնենք:

Մելքիսեդէկ քահանայ

ՄԻՏՔԸ ՓԱՐԱՑԵԼ Է

II

Մեր առաջին յօդուածում կանգ առնելով այն սոսկալի աղէտի վրա, որը պայթելով Կովկասի գլխին, ահա տասն երկու ամիսներ շարունակ մեր երկիրը դարձրել է սրի ու հրի և աւերածութիւնների մի վայր, ասացինք որ այդ սարսափների, կոշկանդումների և արիւն ճապաղիքների ազդեցութեան տակ կորցրել ենք ամեն մի գիտակցութիւն, քարացել է մեր միտքը և ընկել ենք զառանցանքների մէջ: Թուրքը արբեցած, մարդկային մարմինների ճենճերահոտից և ծարաւի արեան, գինեմոլին յատուկ խանդոտութեամբ շարունակում է աղաղակել արիւն, արիւն, մինչև որ իր մագիլներով յօշոտված, իր արիւնաքամ մարմնի ուժասպառ լինելուց չի ընկնի մի ինքնամոռաց թմրութեան մէջ և չի զգաստանայ:

Հայն էլ զառանցում է, բայց այլ է նրա զառանցանքը, այս խօսքերով վերջացրինք մեր յօդուածը. այժմ տեսնենք ինչումն է նրա զառանցանքը:

Այնքան աւելի լուրջ է դառնում խնդիրը, որքան նա բարդ է, այնքան աւելի տակտ, խելացութիւն և սառը դատողութիւն է պահանջվում, որքան կեանքը ընդունել է արտասովոր, սուր ու փոթորկալից արտայայտութիւն:

Աւելի բարդ խնդիր, քան հայ Թուրքական ընդհարումները և աւելի արտասովոր ու փոթորկալից դրութիւն, քան մեր կեանքը, չը կարծեմ թէ լինի. հետևապէս մենք՝ հայերս, որպէս շատ ուժեղ կողմը, անհրաժեշտօրէն պիտի երևան հանէինք և տակտ և խելացութիւն և սառը դատողութիւն: Մենք պիտի թափանցէինք խնդրի ներսը—ամենաներսը, քննէինք շարժառիթները, դրդիչ հանգամանքները, ուսումնասիրէինք այն պայմանները, որոնք առաջացրին մի այսպիսի շարժում և առանձնապէս այն դժոխային մեքենայութիւնը, որը այնքան ճարպիկ կերպով այդ շարժումը ուղղեց մեզ—հայերիս դէմ: Խնդրի այսպիսի ուսումնասիրութիւնը մեզ կը հասցնէր այնպիսի հետևանքների, որ մենք հեշտութեամբ կը մտածէինք խաղաղութեան միջոցը:

Հայը Թուրքի պէս չի աղաղակում արիւն ու աւեր, այդ բառերը, այդ վայրենի հասկացողութիւնները, այդ կործանիչ բաղդը խորթ են նրա համար և եթէ այսօր հայն էլ դիմել է զէնքի, նա ևս սպանում, այրում, քանդում է, նա անում է ակամայից, կսկիծը սրտում, երկիւղ աւերման վիշտը դրոշմած ճակատին. այլ կերպ վարվել չէ կարող. այդ թելադրում է նրա ինքնապաշտպանութեան զգացմունքը, ազատասիրութեան անզուսպ ըմբռնելի բնազդը, դրա մասին չէ մեր խօսքը: Մենք դեռ ևս Երևանի փետրվարեան՝ մանաւանդ մայիսեան Թուրքական ընդհարումների ժամանակ տեսանք, համոզվեցինք և յայտնեցինք, որ հայը պիտի զինվի, զինադրէ, կռւի, որովհետև այդ է վայրենացած Թուրքին զսպելու միջոցը. և այսուհետև էլ նա պիտի շարունակէ նոյնը, չը դուրս գալով ինքնապաշտպանութեան սահմաններից: Սակայն այս ընդունելով որպէս ժամանակաւոր միջոց, անցողական մի անհրաժեշտ չարիք, մենք վերջապէս պիտի կանգ առնենք վերջնական խաղաղացման հարցի վրա և գտնենք ելքը:

Ահա թէ ինչի մասին է մեր խօսքը:

Հայը խաղաղութիւն ցանկանում է ամբողջ սրտից, նա այսօր կը տար ամեն բան, եթէ նրան խոստանային խաղաղութիւն, եթէ նրան հրաշխաւորէին նրա գոյքի—Թուրքի սրանից ապահովութիւնը, իր խաղաղ աշխատանքին, իր շինարար գործունէութեան զանազան հնարաւորութիւնը: Նա այսօր էլ անիծում է այն պատճառը, որի շնորհիւ նա ստիպված էր զուէթանի, բահի, ուրագի, սղոցի ու կոանի փոխարէն հրացան վերցնել իր գոյքը պաշտպանելու, իր կնոջ պատիւը պահելու համար, նա նզովում է այն վայրկեանը, երբ սկսվեց Կովկասի երկնակամարի մթագնումը վառօդի ծխով, երբ սիրուն դաշտերը ու լեռները ներկվեցին արիւնով: Կրկնում ենք, հայը ծարաւի խաղաղութեան՝ կը տար ամեն բան, միայն նրան վերադարձնէին այդ խաղաղութիւնը, բայց հայն էլ գլուխ կորցրած այդ սոսկալի աղէտի, այդ արիւն ու աւերի տեսարաններից՝ զառանցում է մի խաղաղութիւն, որին չը գիտենք ինչ անուն տանք:

Որպէս միջոց վերջնական խաղաղացման, փափագում էին միմեանց ականջին, պէտք է բաժանել հային ու Թուրքին, ապա սկսեցին բարձրաձայն յայտնել նոյն բանը, լսեցինք նոյն բանը նաև կօմպետենտ մի շրջանում, և վերջապէս նոյն կարծիքը մուտք գործեց նաև մեր մամուլի մէջ, ցաւելով կասենք նաև «Մշակի» մէջ, № 11:

Պ. Լ. Մարկոսեանը, թարգման հանդիսանալով այս մի տարվայ շարունակվող սարսափների տակ կծկված, յուսահատ և սառը դատելու ընդունակութիւնը կորցրած շատ հայերի կարծիքի, յայտարարում է «Հիմնական միջոցը երկու կռւող ազգերի բաժանումն է միմեանցից», ապա շարունակում է, «հարևանդ վատ է, փախիր նրանից,—ասում է Թուրքական առածը: Կեանքի մէջ էլ տեսնում ենք, որ ամբարիշտ եղբայրներին հաշտեցնելու համար միակ միջոցը նրանց բաժանելն է»:

«Այո, պէտք է ընդմիշտ հային հեռացնել Թուրքից այն տեղերում, ուր անպաշտպան է նրա կեանքը, պատիւը, գոյքը, ուր նա ամեն րոպէ զգում է իրան փշի վրա, պէտք է բաժանել ոչ միայն այդպիսի գիւղերը, այլ և գաւառներն ու նոյն իսկ նահանգները»:

Մի կողմ թողնելով այս տողերի մէջ արտայայտված բաւականին հնացած տեսակէտները, կանգ առնենք միմիայն բաժանելու, հային ու Թուրքը ջոկելու հարցի հնարաւորութեան վրա: Մի կողմ թողնենք մեր տեսակէտը նոյն իսկ այդ երկու ազգերին միմեանցից ջոկելու ոչ ցանկալի լինելու նկատմամբ. բայց միթէ, պարոններ, հնար էք գտնում գաւառներ ու նահանգներ ջոկելը, միթէ կարծում էք, որ կարելի է հարիւր հազարաւոր ժողովուրդներ մի նահանգից միւս նահանգը փոխադրել և այդպիսով չարիքի առաջը առնել: Դուք մի հրապուրվէք այդպիսի հաշւով, մի ոգևորվէք րոպէի սարսափի ազդեցութեան տակ արձակած վճիռների հնարաւորութեամբ, մի փոքր մտածեցէք, մի փոքր սառը դատէք, միթէ յիրաւի հնարաւոր է հայ ու Թուրք—շուրջ երկու միլիոնից էլ աւելի այդ խառը ապրող ժողովուրդներին միմեանցից բաժանել և այնպէս անջատ ապրել, ինչպէս չեն ապրում նոյն իսկ երկու դրացի պետութիւնների ժողովուրդները:

Մտածեցէք պարոններ միջոցներ, դրանք միջոցներ չեն. այդպիսի կարծիքի համար մեզ Եւրոպայում կը ծաղրեն:

Ա.—Դօ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Բարձրագոյն հրովարտակ

Օրէնքների ժողովածուի մէջ հրատարակված է Բարձրագոյն հրովարտակը փետրվարի 2-ին Պետական Դումայի ընտրութիւնների կանոնադրութեան գործադրութեան մասին Կովկասեան երկրում:

Դումայի անդամների թիւը որոշված է՝ Բաքուի նահանգի համար՝ Բաքու քաղաքը—1 և միւս քաղաքներն ու գաւառները 2: Բաթումի վիճակի և Սուխումի շրջանի համար՝ 1: Դաղստանի վիճակի համար՝ 1: Զաքաթալի շրջանի համար՝ 2: Գանձակի նահանգի համար՝ 3: Կարսի վիճակի համար՝ 1: Կուբանի վիճակի և Սեւծովեան նահանգի համար՝ 6: Քութայիսի նահանգի համար՝ 3: Տերեքի վիճակի՝ 3: Թիֆլիսի նահանգում, Թիֆլիս քաղաքի համար՝ 1, միւս քաղաքների ու գաւառների համար՝ 3 և Երևանի նահանգի համար՝ 3:

Կուբանի վիճակի և Սեւծովեան նահանգի կողմից Դումայի համար ընտրելի անդամների թւից երեք հոգին ընտրվում են կօզակների կողմից, իսկ երկուսը միւս ազգաբնակութեան կողմից: Ամեն մի գաւառում, շրջանում կամ բաժանմունքի մէջ կազմվում են հողատէրերի երեք ընտրողական համաժողովներ՝ քաղաքային ընտրողների, գաւառամասային ժողովների լիազօրների և գիւղական շրջանների ժողովների: Լիազօրների առանձին ընտրողական ժողովներ են կազմվում կօզակների ստանիցաների: Տերեքի և Կուբանի շրջաններում Սեւծովեան նահանգի հետ միասին կազմվում են երկու վիճակային ժողովներ, մէկը՝ կօզակների ստանիցաների լիազօրների համաժողովի ընտրողներից, իսկ երկրորդը միւս բոլոր համաժողովների ընտրողներից:

Դումայի անդամներ ընտրող բանուորական պատգամաւորները ընտրվում են Բաքուի նահանգում և Բաքու քաղաքում՝ 4 հոգի, Բաթումի վիճակում՝ 1, Թիֆլիսի նահանգում և Թիֆլիս քաղաքում՝ 2, Կուբանի վիճակում և Սեւծովեան նահանգում միասին՝ 2:

Հողատէրերի ընտրողական համաժողովում, Անդրկովկասի նահանգներում և վիճակներում անմիջական կերպով մասնակցում են նրանք, որոնք իրանց սեփական գոյքերի համար, բացի առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւններից, վճարում են տարեկան գինակի հարկ ոչ պակաս 15 րուբլուց: Տերեքի և Կուբանի շրջաններում հողային կալքերի համար վճարում են տարեկան պետական հողային տուրք, ոչ պակաս 3 ր. 30 կոպէկից, նրանք, որոնք կառավարում են յիշեալ հարկատու հողերը մի տարուց ոչ պակաս և նրանք, որոնք կապալով են վերցրել այդ տեսակ հողեր: Այն անձինք, որոնք անշարժ կալքերի համար վճարում են վերոյիշեալ քանակից պակաս տուրք, մասնակցում են ընտրութիւններին լիազօրների միջոցով:

Կովկասեան երկրում, բացի Բաթումի և Ղարսի վիճակներից, գաւառամասի գիւղական ժողովների լիազօրներ ընտրելու համար գիւղերը, աուլները և գաղութները միացնելով ուչաստոկներ են կազմվում, առանձին ցուցակներով, որը հաստատում է Փոխարքան: Այդ տեսակ ուչաստոկները Փոխարքայի կարգադրութեամբ կարող են միացվել: Ուչաստոկի ժողովները կազմվում են իւրաքանչիւր տասը տնից ընտրված մէկ պատգամաւորներից: Ուչաստոկի ժողովները և կօզակների ստանիցաների ժողովները և գաւառամասերը իւրաքանչիւրը ընտրում է իր կողմից երկու լիազօր: Բաթումի ու Ղարսի վիճակներում լիազօրներին ընտրում են գիւղական շրջանային ժողովները, իւրաքանչիւր ժողով երկու հոգի:

Ընտրողական ցուցակները Անդրկովկասում կազմում են գաւառապետները կամ շրջանի կառավարիչները, Տերեքի և Կուբանի վիճակում՝ բաժանմունքի ատամանը կամ շրջանի կառավարիչները, քաղաքներում՝ քաղաքային վարչութիւնները կամ ոստիկանական հաստատութիւնները:

Հողատէրերի և գաւառամասերի շրջանային գիւղական ժողովների լիազօրների համաժողովներում նախագահում են գաւառական պարագլուխները կամ հաշտարար դատաւորները:

Ընտրութիւնների վերաբերեալ նահանգական կամ վիճակների մասնաժողովներ կազմվում են Բաքուի, Քութայիսի, Գանձակի, Թիֆլիսի, Երևանի նահանգներում, Կուբանի և Տերեքի վիճակներում:

Դումայի անդամների ընտրութիւնները կատարվում են իւրաքանչիւր նահանգական վիճակային ընտրողական առանձին ժողովներից եկած պատգամաւորների հետ միասին: Ընտրութիւնները սկսելու ժամանակը որոշում է Փոխարքան:

ՏԻԽԼԷՆԿՕՅԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Մոսկվայի նշանաւոր իրաւաբաններից մէկը Ն. Տեխլէնկօն, որ մասնաւոր գործով գտնվում է Թիֆլիսում, կիրակի օր, փետրվարի 5-ին, սահմանադիր կուսակցութեան ժողովում արեց մի զեկուցում, որի համառօտութիւնը հետևեալն է:

I

Սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը ծնունդ առաւ երկու ազդեցիկ կազմակերպութիւնների գործակցութեամբ, որոնցից մէկն էր «Ազատութեան միութիւնը» («Союзъ Освобожденія»), իսկ միւսը զեմստվային-քաղաքային համագումարը: Այն պայմանները, որոնց շրջանում սկսվեց կուսակցութեան գործունէութիւնը, աննպաստ էին: Գործադուլները, յեղափոխական բունկումները, սաստկացած դրութիւնը հանդէս էին բերել մի դժուարութիւններ: Անկարելի էր մարդիկ հրաւիրել, նամակներ գրել, հեռագիրներ ուղարկել:

Այդ պատճառով առաջին ընդհանուր ժողովը լիակատար չէր: Մի քանիսն էլ դժուարութեամբ էին եկել ժողովին: Երկրորդ ժողովը գործադուլի պատճառով չը հաւաքվեց Մոսկվայում:

Վերջապէս բաւական ծանր պայմաններում հնարաւոր եղաւ ժողով գումարել Պետերբուրգում:

Այդ համագումարը նշանաւոր էր այն բանով, որ նա ցոյց տուեց կուսակցութեան կենսունակութիւնը և առացած ոյժը:

Պարզվեց, որ կուսակցութիւնը արմատներ է գտել պետութեան զանազան մասերում ապրող կողմնակի ազգութիւնների և ճնշուածների, որոնք մեծ դեր խաղացին մի քանի ուրիշ կուսակցութիւնների տարրմման գործում:

Կուսակցութեան ծրագիրը վերաքննվեց և նորից վաւերացվեց ենթարկվելով քիչ փոփոխութիւնների: Առաջին փոփոխութիւնը վերաբերում էր կանանց մասնակցութեան հարցին: Որոշվեց ընդունել կանանց ընտրողական իրաւունք լիահաւասար կերպով տղամարդկանց հետ:

Երկրորդ փոփոխութիւնները, որ խիստ էական բացայայտիչ բնաւորութիւն ունէր, վերաբերում էր այն կէտին, որով որոշվում էր սահմանադրութիւնը: Վճռվեց որոշակի գրել, որ կուսակցութիւնը աչքի առաջ ունի միապետական սահմանադրութիւն:

Երրորդ հարցը վերաբերում էր հողի գնահատութեան: Որոշվեց հետևեալը: Հողը պէտք է գնահատվի ամեն մի շրջանում եղած նորմաներով և ոչ կապալագրերով, որոնք կարող են չափազանց բարձր լինել:

Ազգութիւնների վերաբերեալ յօդուածը նորից քննութեան ենթարկվեց և անփոփոխ ընդունվեց: Կովկասի մասին տեղեկութիւններ քիչ կային, շնորհիւ մասամբ այն բանի, որ իրանց կովկասցիները կամ մասնակից չէին լինում համագումարին, կամ գալիս էին շատ քիչ թւով:

Կուսակցութեան տակտիկայի վերաբերութեամբ կարող եմ ասել հետևեալը:

Կուսակցութիւնը առանց տատանման ընդունում էր Պետական Դումա գնալու և ընտրութիւններին մասնակցելու առաջարկը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դուման սկիզբն է ներկայացուցչական հաստատութեան կազմակերպութեան, որից պէտք է օգտվել աւելի լաւ կազմակերպութիւն ձեռք բերելու համար ապագայում:

Իսկ զինված ապստամբութեան և անընդհատ գործադուլների սիստեմը հերքվեցին:

Կուսակցութիւնը ընդունում է քաղաքական գործադուլ, բայց լաւ կշռելով, երբ և ինչպէս նրան անել, կուսակցութիւնը իր միջոցներին ուժեղագոյն է համարում ամենաընդարձակ կազմակերպական գործունէութիւն բազմաթիւ միութիւնների գործակցութեամբ:

Թէ ինչ պէտք է անել Դումայում, արդեօք պահանջել ընդհանուր ձայնատւութիւն և հեռանալ, թէ այստեղ մասնակցել ծրագրի և միւս կէտերը պահպանելու նպատակով—վճռվեց նախօրօք ոչինչ չը դուրս գցել գործունէութեան ցուցակից, և գնալ Դումա բոլոր արտօնելով, իսկ յետոյ գործել, կշռելով բոլոր նպաստաւոր և աննպաստ պայմանները: Եթէ մենք մեզ սահմանափակենք, այն ժամանակ, օրինակ, գիւղացիները կընկնեն պահպանողականների գիրկը, որոնք քիչ էլ տան, էլի մի բան կը տան նրանց, իսկ մենք խռով կացած կը հեռացնենք նրանց մեզանից:

Կուսակցութիւնը յոյս ունի, որ բանուորական ներկայացուցիչների հետ կարող լինի համաձայնութիւններ կայացնել:

Ինչ վերաբերում է այն հարցին թէ ինչպէս պէտք է վերաբերվել պետութեան ֆինանսների քայքայման ագիտացիային, կուսակցութիւնը համարում է այդ քայլը ոչ խելացի և նպատակայարմար:

Ամենակարևոր ժամանակակից հարցը կուսակցութեան կազմակերպութիւնն է և ընտրողական գործի մէջ կարելին չափ ընդարձակ մասնակցութիւնը: Մոսկվայի կենտրոնական կոմիտէն շատ գործել է այդ ասպարէզում և արդէն որոշ փորձառութիւն է ձեռք առել:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

Երկուշաբթի, փետրվարի 6-ին, կայացաւ քաղաքային խորհրդի նիստը, որը զբաղվեց հետևեալ խնդիրների քննութեամբ:

1) Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի ոստիկանապետը հացթխների գրասենեակը վերաբանալով դիմել էր քաղաքային վարչութեանը և հարցրել թէ՝ արգելք չը կա՞յ արդեօք քաղաքային վարչութեան կողմից այդ գործը սկսելու վերաբերութեամբ: Քաղաքային վարչութիւնը իր կողմից արգելք չը գտնելով պատասխանել էր ոստիկանապետին այդ իմաստով: Այդ պատասխանը քաղաքային մի քանի իրաւասուներ գտան անհամապատասխան, որովհետև հացթխների գրասենեակի պահպանութեան գործը ծանրաբեռնիչ լինելով ազգաբնակութեան համար —այդպիսի պատասխան կարող է ընդունվել իբրև համաձայնութիւն քաղաքիս ազգաբնակութեան կողմից, որ ցանկալի չէ: Քաղաքագլխի պաշտօնակատարը բացատրում է, որ հացթխների գրասենեակի պահպանութիւնը քաղաքային ինքնավարութեան կանոնադրութեան համաձայն, վերապահված է քաղաքային ինքնավարութեան, իսկ քաղաքային ինքնավարութիւնը իր ժամանակ մերժեց այդ հիմնարկութեան պահպանութիւնը իր վրա վերցնելու և պ. ոստիկանապետը իր հարցմունքով վերսկսել գործը—կամենում է միայն իմանալ թէ՝ արդեօք չէ՞ կամենում նորից ներկայումս ևս ինքը ստանձնել այդ գործը և որ քաղաքային վարչութիւնը այլապէս չէր կարող պատասխանել: Քաղաքային խորհուրդը՝ ի նկատի ունենալով, որ ոստիկանապետի դիմումը քաղաքային վարչութեանը պէտք է հասկանալ՝ դիմումն յանուն քաղաքային ինքնավարութեան, վճռեց՝ այդ հարցը առաջիկայ նիստերից մէկում քննութեան առարկայ դարձնելով նոր պատճառաբանած պատասխան պատրաստել յանուն ոստիկանապետի:

2) Իրաւասու պ. Վարդանովի առաջարկութեան համաձայն, քաղաքային խորհուրդը, ի նկատի ունենալով Գանձակի կոտորածների վերաբերութեամբ երևացող զանազան յօդուածները լրագիրներում, որոշեց՝ որ քաղաքային խորհրդի կողմից Գանձակ ուղարկված 3 պատգամաւորներ իրանց կատարած քննութեան մասին առաջիկայ նիստերում ներկայացնեն մի մանրամասն և ճշգրիտ զեկուցում:

3) Կարդացվեց քաղաքային իրաւասու պ. Ա. Բ. Եւանգուլովի բանտից ուղարկված յայտարարութիւնը, որով նա շնորհակալութիւն է յայտնում քաղաքային խորհրդին՝ իրան յայտնած վստահութեան համար: Քաղաքագլխի պաշտօնակատարի ձեռքով, պաշտօնական աղբիւրներից հաւաքած տեղեկութիւնների համաձայն, քաղաքային իրաւասուները իմացան, որ պ. Եւանգուլովը բանտարկված է որպէս երկաթուղային գործադուլի բիւրօյի անդամներից մէկը: Իրաւասուները, ի նկատի ունենալով պ. Եւանգուլովի շինարար, եռանդուն և հասարակական գործունէութիւնը և այն հանգամանքը, որ նա քանիցս անգամ քաղաքային խորհրդի նիստում հակառակ կարծիքն է արտայայտել այդպիսի գործադուլ սկսողների դէմ, վճռեց՝ միջնորդել պ. օկրուգի առաջ պ. Եւանգուլովի գործը օր առաջ դատարանին յանձնելու և արձակելու նրան բանտից՝ երաշխաւորութեամբ:

4) Կարդացվեց իրաւասու Ն. Թամամշեանի յայտարարութիւնը, որով նա յայտնելով որ ենթարկվել է դատաստանական պալատի վճռով 1 տարի բանտարկութեան—ինքը դիմելու է սենատ՝ իր գործի վերաբերութեամբ և չը ճանաչելով իրան ոչ յանցաւոր և ոչ բանտարկեալ—ցանկանում էր, որ իր ընկեր իրաւասուները նոյն վստահութեամբ և հաւասարով վերաբերէին դէպի ինքը: Քաղաքային խորհուրդը գտնում է, որ իրաւասու Թամամշեանը իր վստահութիւնը չէ կորցրել իր ընկերներից և մինչև սենատի մէջ գործի վճիռը—ազատ է:

5) Կարդացվում է քաղաքային վարչութեան զեկուցումը՝ առաջիկայ Պետական Դումայի ընտրութիւնների համար նախապատրաստական աշխատութիւնների վերաբերմամբ: Այս հարցի մասին մանրամասն զեկուցումն է տալիս քաղաքային վարչութեան վիճակագրական բիւրօի կառավարիչ իշխան Մ. Արղութեանսկին: Այդ զեկուցումից երևաց, ի միջի այլոց, որ համայն Ռուսաստանի համար՝ ընտրութիւնների վերաբերութեամբ զանազան ժամանակներում՝ մէկը միւսին լրացնող, փոխող և այլն, և որ Կովկասի վերաբերութեամբ մի 3—4 օրից յետոյ կը հրատարակվեն ընտրական օրէնքներ: Քաղաքային խորհուրդը, մտքերի փոխանակութիւնից յետոյ, վճռեց՝ ընդունել քաղաքային վարչութեան կողմից ներկայացրած զեկուցումը, անմիջապէս ձեռնարկել ընտրութիւնների գործին, մի և նոյն ժամանակ յայտնել ցանկութիւն ուր հարկն է որ ընտրութիւնները կանոնաւոր կատարելու համար անհրաժեշտ գրաւականն են՝ ըստ խորհրդի կարծիքի, ժողովների և խօսքի ազատութիւնը և անձի անձեռնմխելիութիւնը:

Մնացած հարցերը առանձին կարևորութիւն չէին ներկայացնում:

ԲՈՂՈՔ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Երբ ճեմարանի աշակերտներս զգալով մեր դրութեան անտանելիութիւնը և կրթական ու ուսումնական գործի թերի և միակողմանի ուղղութիւնը, բողոք տուինք մեր ղեկավարներին, ներկայացնելով մի պահանջագիր, այն ժամանակ բարձրապատիւները մեզ ասում էին. «Լաւ կը լինի լռէք և գոհ լինէք նրանով, ինչ որ բարեհաճում ենք իբրև ողորմութիւն ձրիաբար բաշխելու. ապա թէ ոչ՝ բոլորիդ էլ կը վռնդենք և այն ժամանակ թէև կը զղջաք, ուշ կը լինի: Կարծում էք հասարակութիւնը կը բողոքէ. ոչ, հասարակութիւնը ժամանակ չունի, ձեզնով չէ հետաքրքրվում, գուցէ և ձեզ, հրիակներիդ, մեղադրէ»:

Մամուլի մէջ գրվեց աշակերտութեան պահանջագրի էութիւնը: Պ. Վ.-Միրոզը շէշտել էր իր յօդուածում հասարակութեան խիստ անտարբեր վերաբերմունքը դէպի ճեմարանը և նրա սաները:

Եւ հասարակութիւնը կարծես ուզում է ապացուցանել, որ իրան համար մի և նոյն է, թէ ինչպէս կը վարվեն իր մի քանի հարիւր զաւակների հետ: Կարծես հասարակութիւնն ուզում է հաստատել բարձրապատիւների լիազօրութիւնը ճեմարանի ամեն մի խնդրում:

Քեզ եմ դիմում, անտարբեր հասարակութիւն, պատռիր անտարբերութեան պատանը, տուր քո կարծիքը: Միթէ քեզ համար ոչ մի նշանակութիւն չունի, թէ ինչ ոգի են ներշնչում քո մատաղ սերունդից մի խումբի. միթէ չես ուզում հասկանալ, որ այդ նոյն բողոքող պատանիների ձայնը խեղդվելիս, նրանց մէջ կը հաստատվի բարձրապատիւների քմահաճ և անընդունակ ոգին և ապագայում ստիպված պիտի լինես բողոքել նրանց դէմ, որոնց բողոքին արձագանք անգամ չես ուզում տալ:

Միթէ մենք, ճեմարանականներս, քո մատաղ սերունդից, քո հարազատներից չենք: Արձագանք տուր պ. Վ.-Միրոզի յօդուածին, ցոյց տուր բարձրապատիւներին, որ ինչքան էլ դժուար ժամանակներում ենք ապրում, բայց և այնպէս քեզ համար մի և նոյն չէ, թէ մի հարիւր պատանիների բողոքը անհետևանք է մնում բարձրապատիւ աստուածաբաններից թէ ոչ:

Բողոքում եմ անտարբերութեանդ դէմ, հայ հասարակութիւն, բողոքիր քանի ուշ չէ, արձագանք տուր Փարաջայի տակը ճնշված պատանեկական կրծքերից դուրս թռած բողոքին:

Ճեմարանցի

ՆԱՄԱԿ ԴՂԼԱՐԻՑ

Յունվարի 22-ին

Ամեն մի հայ փոքր ի շատէ մխիթարվում է, երբ տեսնում է, որ թէև հայը մի տեղ հալածվում, միւս տեղ կոտորվում է, սակայն ամենաչնչին յարմարութիւն և կեանքի ապահովութիւն ունեցած դէպքում կարողանում է ցոլացնել կուլտուրական այն կայծը, որ հայի ժառանգութիւնն է:

Այդպիսի մխիթարիչ տպաւորութիւն ստացայ ես Դղլարում, ուր գոնէ կեանքի ապահովութիւն, ապրելու հնարաւորութիւն կայ: Այստեղ Դղլարի հայուհեաց նորակազմ բարեգործական ընկերութիւնը բաց է արել կար ու ձևի դպրոց ու հրաւիրել վարժուհի: Այսօր երեկոյեան բազմութեան ներկայութեամբ դպրոցի բացման հանդէսը կատարվեց: Ընկերութեան նախագահուհու տիկ. Դօլգեանը այդ առիթով կարդաց մի ճառ, որով քաջալերում ու հրաւիրում էր Դղլարի կանանց անընկճելի կերպով շարունակ գործել յօգուտ հասարակութեան և ազգի, աշխատել երբեք յետ չը մնալ այն առաջադիմական քայլերից, որ անում են զանազան քաղաքներում հայուհիք:

Պէտք է ասել, որ հայ կուսակցութեան մուտքը Հիւսիսային Կովկաս, մեծ օգուտ է տալիս տեղիս հայ ժողովրդին, նա քնած, թմրած հային թևեր է տալիս, ուղի է հարթում, գրգռում է թէ մարդկանց և թէ կանանց դէպի նորանոր գործունէութիւն: Չը նայած, որ արդէն ուսումնական տարվայ կէսն անցել է, բայց Դղլարի հայը այնքան ոգևորված գտնվեց մայրենի դպրոցական գործում, որ երկու դպրոց բացեց—մէկը տղայոց, միւսը աղջկանց և երկուսի համար էլ վարժուհի և ուսուցիչներ հրաւիրեց: Քաջալերում ենք դղլարցիներին և ցանկանում, որ նրանք շարունակ նորանոր հանրօգուտ ձեռնարկութիւններ սկսեն: Խորհուրդ ենք տալիս հնարաւորութիւն ունեցող հայերին հետևել դղլարցիների օրինակին:

Վ. Սաղանդարեան

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Փետրվարի 4-ին

«Մշակ»-ի խմբագրութեանը յայտնի է տեղումս բնակած 11-րդ Չերնոմորեան գնդի կօզակների քստմնելի արարքները Կարսի հայ ազգաբնակութեան վերաբերմամբ. յայտնի է նաև, որ թէ ժողովուրդը և թէ ոստիկանապետ փոխ-գնդապետ Գրիգորովիչ—որ մի շատ արդարասէր ու մարդասէր անձն է—դիմել էին զինուորական նահանգապետ գեներալ Սամսոյլովին՝ իր պաշտպանութեան ներքոյ առնելու խաղաղ հայ ժողովուրդը: Ես այսօր ուրախութեամբ հաղորդում եմ ընթերցողներին, որ մեր ծերունազարդ նահանգապետը խիստ միջոցների դիմեց կօզակների վայրագութիւնները զսպելու համար, այլապէս դժուար թէ առանց արիւնհեղութեան, թալանի ու կողոպուտի այդ մարդ-արարածները ձեռք քաշէին խաղաղասէր հայ ժողովրդից:

Մեծ յոյս ունինք, որ մեր նահանգական իշխանութիւնը ի պատիւ իր և ի նախատինս ուրիշ նահանգական իշխանութիւնների մինչև վերջը հաւատարիմ կը մնայ իր ուխտին, ամեն կերպ աշխատելով իրան վստահացած երկրում խաղաղութիւնն ու անդորրութիւնը պահպանել:

Երէկ երևան է եկել քաղաքումս մի քստմնելի, աւելի ճիշտ՝ զարհուրելի սպանութեան գործ: Տեղիս երկաթուղու կայարանից ոչ հեռու, կամրջի տակ, տօպրակի մէջ գտնվում է մի կտոր-կտոր արած, յօշոտված, գազանի բազմաթիւ վէրքեր հասցրած անյայտ մարդու դիակ: Զարհուրելին այն է, որ այդ նահատակ մարդու գլուխը մարդ գազանները տարել են, որպէս զի չը ճանաչվի: Սակայն, ինչպէս ասում են, «արիւնը անհետ չի կորչի», մարդիկ են դուրս գալիս, որոնք վկայում են թէ՝ այդ մարդը հայ է, վանեցի, մի խեղճ ու կրակ ընտանիքի տէր մարդ, որը քաղաքումս չարչիութեամբ էր պարապում և ապրում էր «Բայրամ-փաշա» կոչված թաղում, մի Թուրքի տան մէջ:

Ամենայն հաւանականութեամբ Թուրքերն են սրախողխող արել այդ դժբաղդ հային, ու եղեռնագործութեան հետքը կորցնելու համար, կտոր-կտոր անելուց յետոյ, գլուխն էլ կտրել, տարել են...

Հարցնում են տանտէր Թուրքին անհետ կորած անկեց հայի մասին, պատասխանում է՝ «չը գիտեմ, գնացել է մի քանի օր առաջ մի ինչ որ հայ գիւղ իր առևտրական գործերով»... Գրողը գնաց...

Խիստ քննութիւնը անշուշտ կը պարզի և և երևան կը հանէ այդ քստմնելի եղեռնագործութեան մէջ մեղադրվող հրէշներին և արդարադատութեան ձեռքը կը յանձնէ:

Սեպուհ

ԴԱՐՁԵԱԼ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ

(Իմ պատասխանը պ. Խաժակին)

XIII

Սակայն պ. Խաժակը այս անգամ մի ուրիշ գիւտ էլ է անում և համեմած իր «ինքնուրոյն փիլիսոփայական խորհուրդներով ու ազգագրական (էթնօգրաֆիական) գոհարներով» հանդէս բերում ընթերցողների առաջ:

Նա վկայութեան է կոչում «փոքրամասնականների կամ Գ. Պլեխանովի կուսակցութեան օրգանը», «Начало»-ի № 1-ը, որի առաջնորդողում գրված գեղեցիկ տողերը՝ ազգերի ազատ դաշնակցութեան, քաղաքական և կուլտուրական ինքնուրոյն զարգացման մասին, ուղղակի շլացրել են մեր պ. քննադատին իրանց «նորութեամբ»:

Փակագծի մէջ նկատենք, որ այն Խաժակը, որ սոյն խնդրի մասին գրած իր նախկին («Մշակ» 1905) յօդուածում այն տաքհան պարսաւում, անպատկառ խօսքեր է ուղղում Պլեխանովի հասցէին, նոյն հարցի վերաբերմամբ, ներկայ դէպքում, րոպէի և նպատակայարմարութեան հարկադրութեամբ, նոյն Պլեխանովը յարգանքի և մեծարանքի է արժանանում նոյն Խաժակի կողմից.—դրական ցինիկութեան մի աւելորդ ապացոյց: Փակագիծը փակենք:

Պ. Խաժակը կամ շատ միամիտ է, կամ թէ՝ միամիտ է կարծում իր դիմացինին մասնաւորապէս, և ընթերցողներին՝ ընդհանրապէս: «Начало»-ի խօսքերը Ռուսաստանի ազգութիւնների ազատ դաշնակցութեան (союзъ) մասին, այնպէս, ինչպէս գործնական կեանքում վճռված է ազգային հարցը Շվեյցարիայում և Ամերիկայի Միացեալ-Նահանգներում, այնքան են հեռու տանում պ. Խաժակին իր ըղձացած սպասելիքների և իր ցանկութիւնների մէջ, որ նա առանց այլ և այլութեան «Начало»-ի այդ խօսքերի տակ հասկանում է նոյն կարգի իրաւաբանական հիմքերով մի ֆեդերատիւ կազմ, ինչպիսին, օրինակ, մեր երկրի ֆեդերալիստներն են պատում:

Պ. Խաժակը շատ է կանխել ու շտապել իր ենթադրութիւնների մէջ:

Եթէ պ. քննադատը մի քիչ բարեխիղճ լինէր և կարդար ու լաւ ըմբռնէր այն քաղաքական ծրագիրը—մանաւանդ զանազան ազգութիւններին վերաբերեալ կէտերը—որի դէմ ուղղում է նա իր ժանգոտած նիզակները, այն ժամանակ ոչ նրա համար նորութիւն կը թւային «Начало»-ի խօսքերը և ոչ էլ նա «թարս» կը հասկանար այդ խօսքերը:

«Առանձին ազգութիւնների առջև քաղաքական և կուլտուրական ինքնուրոյն զարգացման ուղիներ բաց անելը»—վաղուց որդեգրված կէտեր են սօցիալ-դէմօկրատների քաղաքական ծրագրի մէջ: Բոլոր ազգերի և նրանց լեզուների անխտրական, համահաւասար իրաւունքները բոլոր տեղական, ընդհանուր-հասարակական թէ պետական հիմնարկութիւններում, այդ ամենի ներդաշնակ յառաջադիմութիւնն ու զարգացումը երաշխաւորող օրէնսդրական-հիմնադրական նորմաներն են հէնց, որ պիտի կազմեն «ազգերի ազատ դաշնակցութեան» նիւթն ու խարիսխը:

Ահա թէ ինչ մտքով պիտի հասկանալ «Начало»-ի խօսքերը. մի դրոյթ, որ անմիջապէս բղխում է սօցիալ-դէմօկրատիայի ծրագրից:

Եթէ պ. Խաժակը «ազգերի ազատ դաշնակցութիւն» խօսքերի տակ հասկացել է մի իրաւաբանական-քաղաքական ակտ, ինչպիսին ներգործված է Շվեյցարիայում և Միացեալ-Նահանգներում, և այն իրաւաբանական կոմպետենցիան, ինչպիսին ունի այդ երկրների ֆեդերատիւ մարմիններից իւրաքանչիւրը,—

եթէ պ. Խաժակը այդպէս է հասկացել, այն ժամանակ նա չարաչար սխալվել է: Մի սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան կենտրօնական օրգանի խմբագրութիւն չէ կարող և իրաւունք չունի երբէք առելու հակառակը այն ծրագրային սկզբունքային որոշումների, որ կայացրել է ինքը՝ կուսակցութեան ամենաբարձր ինստանցիան—կուսակցական համագումարը: Կուսակցական համագումարի լիազօրութեամբ վճռված սկզբունքային ծանրակշիռ խնդիրները, որ բղխում են նոյն այդ կուսակցութեան տեսական դաւանանքից, չեն կարող հրապարակով հերքվել կուսակցութեան որ և է ստորադաս մարմնի կամ օրգանի (պաշտօնական) կողմից. դա վերապահված է դարձեալ կուսակցական համագումարին: Կուսակցութեան ծրագրի մէջ չը կայ պ. Խաժակի կարծեցեալ դաշնակցութեան մասին դրական որոշում, նշանակում է նա իզուր է «Начало»-ից այդ ուղղութեամբ դասեր սպասում:

Բայց պ. Խաժակը կարող է խղճի հանգստութեամբ հաւատացած լինել, որ եթէ Ռուսաստանում յեղափոխութիւնը կատարվեց in Permanenz—այսինքն այն աստիճան արմատական, ըստ մարքսիստական տերմինօլօգիայի, որ ամբողջապէս իրականանայ յեղափոխութեան մասնակցող և տոն տուող ամենաարմատական ու պրօգրեսիւ տարրի (պրօլետարիատի) քաղաքական ծրագիրը (մինիմալ), այն ժամանակ Ռուսաստանում ազգութիւնների հարցը աւելի հիմնապէս կը լուծվի քան ներկայ Շվէյցարիայում և Միացեալ-Նահանգներում, ուր շարունակում են դեռ ևս նեգրերը որոշ չափով խորթ զաւակ ճանաչվել առաւ Ամերիկայում. այն ժամանակ, ասում ենք, Ռուսաստանում կարելի է իրականացնել ազգերի այն ազատ դաշնակցութիւնը և քաղաքական-կուլտուրական անարգել ու ներդաշնակ զարգացման այն բարձր իդէալը, ինչ որ առհասարակ իրականացնել հնարաւոր է բուրժուական հասարակական կարգերի տիրապետութեան շրջանում:

Այդ բուրժուական հասարակական կարգերն են, իրանց խիստ դեմօկրատական ըունաւորումներով, որ ապագայ հասարակապետութեան մէջ անկարելի պիտի դարձնեն պ. Խաժակին սարսափեցնող վարչական սիստեմի—բիւրօկրատիզմի—գոյութիւնը:

Այստեղ արդէն պարտաւոր ենք մենք մի միջանկեալ բացատրութիւն տալ:

XIV

Եթէ մենք տեսական լուսաբանութեան և փաստական հիմքերով ապացուցեցինք բիւրօկրատիզմի գոյութեան անկարելիութիւնը դեմօկրատական երկրներում, ապա դրանով մենք հակադրեցինք և անհաշտութիւնը հաստատեցինք՝ ֆեօդալական հասարակական վերակենաց իդէալի և բուրժուական հասարակական դեռ ևս տիրապետող իդէալի: Բուրժուական հասարակական կարգերի ամենահասունացած և իրանց զարգացման պօտենցիէլ աստիճանը հասած շրջանը, սակայն, էվօլիւսիօնաբար վրա է հասնում այն ժամանակ, երբ անհետ վերանում են ֆեօդալական-արիստօկրատական կարգերի—տնտեսական թէ սօցիալ-քաղաքական—բոլոր հետքերը, ամենուրեք բացառում են զուտ բուրժուական կարգերը և այդ (վերջին) կարգերի ծալքերում անսպառ ոյժ ու էներգիայով բեղմնաւորվում և հզօրանում է ապագայ յաղթութեան գրաւականներով՝ պրօլետարական հասարակական իդէալը:

Հէնց այդ վերջին (պրօլետարական) հասարակական իդէալի փաստական իրականացման—սօցիալիստական կարգերի—համեմատութեամբ, եթէ ուզում էք, ներկայ ամենադեմօկրատական երկրների—Շվէյցարիայի, Անգլիայի, Միացեալ-Նահանգների և Աւստրալիայի—պաշտօնեաներին անուանեցէք բիւրօկրատներ—բուրժուական բիւրօկրատիա: Սօցիալ-դեմօկրատիայի դեմօկրատական հասարակապետութեան (մինիմալ ծրագրի) պաշտօնեաներին՝ նոյնպէս:

Սակայն կը խնդրէինք մեզ սխալ չը հասկանալ: Այնքան, որքան բուրժուազիայի դասակարգային տիրապետութիւնը կը շարունակէ իր գոյութիւնը, այնքան էլ բուրժուական-դասակարգային պետութիւնը կը պահպանէ իր աւրական բնոյթը և հրամայական դերքն ու դերը հանդէպ ամբողջ աշխատաւոր ազգաբնակութեան՝ ընդհանրապէս և պրօլետարիատի՝ մասնաւորապէս: Եւ միայն այնքան, որքան դեմօկրատական հասարակական կարգերը, բուրժուազիայի դասակարգային ընտրեալները կներեն, այնքան էլ դեմօկրատական երկրների պաշտօնեաները կարող են ծառաներ լինել ժողովրդի հաւաքական ներկայացուցչութեան առաջ:

Եթէ կան այնպիսի հասարակական կարգեր, որոնք բուրժուական բնոյթ ունեցող պաշտօնեաների բանակը, վարչական սիստեմը կը դարձնեն ըստ կարելոյն հանրօգուտ, և աւելի ծառայ ժողովրդի հաւաքական ներկայացուցչութեան առաջ, քան այժմեան ամենադեմօկրատական երկրներում է,—այդ օրինակ հասարակական կարգեր, ասում ենք, կիրականացնէ միայն դեմօկրատական հանրապետութիւնը:

Այսպէս ուրեմն, մենք կրկին հասնում ենք մեր մեկնման կէտին և գտնում, որ ոչ միայն խօսք լինել չէ կարող արիստօկրատական-ֆեօդալական բնոյթ ունեցող բիւրօկրատիայի մասին դեմօկրատական հասարակապետութեան մէջ—այնպէս, ինչպէս առաջարկում է մեզ սօց.-դեմ. կուսակց. ծրագիրը,—այլ և բուրժուական դասակարգային բնոյթ ունեցող վարչական մեխանիզմը աւելի ու աւելի է դեմօկրատական գոյն ստանում, քան կարելի է նկատել այդ մինչ այժմեան Եւրոպայում:

Եթէ այս աստիճան երկարաձգվեց մեր բանակռուի նիւթը, ապա դրա պատճառը պիտի վերագրել այն սկզբունքային ծանրակշիռ արժէքին, որ ունի մեզ զբաղեցնող խնդիրը: Մենք ուզում էինք պ. Խաժակի հետ [illegible] ունենալ, և իբրև ոչ որպէս անհատ Խաժակի, այլ որպէս մի որոշ կազմակերպութեան անդամի հետ:

Սար ու ձորով բաժանված աշխարհահայեացքներ են մեր ու պ. Խաժակի հասարակական դաւանանքները: Պ. Խաժակը իբրև մի բուրժուական verkappter (քօղարկված, ծպտեալ) իդէօլօգ, մատնում է իրան ամեն րոպէ, երբ խօսք է լինում որ և է սկզբունքային արժէք ունեցող խնդրի մասին. Նա բուրժուական պալիատիվներ է առաջարկում—մեծ տարածութեան անդամահատումներ—«հիւծախտաւոր» բիւրօկրատիայից ազատվելու համար: Իսկ մենք փնտրում, որոնում ենք բացասական երևոյթի գենեզիսը, ծագման հիմնական աղբիւրը, արտադրող սիստեմը և առաջարկում միայն դրա վերացման անհրաժեշտութիւնը, իբրև միակ միջոցը առհասարակ բացասական երևոյթները բնաջնջելու համար:

Եթէ պ. Խաժակը լինէր մարքսիստ, նոյն իսկ համեստ գաղափար ունենար նրանից, հաւատացնում ենք, այդ աստիճան մակերեսային չէր վերաբերվի նա դէպի սկզբունքային խնդիրները: Բայց ինչ ենք պահանջում նրանից: Պ. Խաժակը յետ է կանգնած նոյն իսկ մի միջին կարգի բիւրգերական (բուրժուական) խելահաս իդէօլօգից: «Ճիշտ տեսակէտի վճռականն են—ասում է մեր բուրժուական իդէօլօգը—մեր նորադարձ ու նոր թխված մի շարք սօցիալ-դեմօկրատները: Խօսում ես փիլիսոփայութիւնից՝ նրանք պատասխանը որոնում են Մարքսի և Էնգելսի մէջ, խօսում ես կրօնական հարցի մասին, նրանք էլի այնտեղ, նոյն արսենալումն են զէնք որոնում»:

Այսպէս է դատում պ. Խաժակը: Ընթերցող, դուք կարող էք առանց մազաչափ կասկածի հաւատացած լինել, որ այսօրվայ Եւրոպայում միայն [illegible] իդէօլօգներն են այս և սրա նման վաղուց հնացած ու ժանգոտած անզօր զէնքերով կռւում մարքսիստների դէմ: Իդէօլօգներ, որոնք իրանց ամբողջ քննադատական «հանճարը» մարքսիզմի նըկատմամբ, ցոյց են տալիս նրանով, որ Մարքսի և Լասսալի մերկացնող ու թունաւոր ուսմունքը ժամանակակից հասարակական կարգերի դէմ բացատրում են նրանց հրեական ծագումով:

Սակայն գիտական աշխարհահայեացքների և փիլիսոփայական սիստեմների ծանօթ բիւրգերական իդէօլօգները այժմեան Եւրոպայում, լաւ գիտեն, որ մարքսիստ լինել և մարքսիստական մտածողութիւն ունենալ չէ նշանակում ամենևին՝ ամեն մի նոր խնդրի—փիլիսոփայական, կրօնական, իրաւական, գրական, բարոյական, ազգային և այլ սահմաններում—լուսաբանութեան ժամանակ դիմել Մարքս-Էնգելսի մասնաւոր աւանդներին և դրա պատասխանը որոնել այնտեղ, այլ մարքսիստ լինել և մարքսիստական մտածողութիւն ունենալ, նշանակում է՝ դաւանել մարքսիստական սկզբունքների և մտքերի սիստեմը, ունենալ մարքսիստական մտածողութեան մեթօդը, հետազօտութեան եղանակը—մի տեսական անխախտ հիմնաքար, որի վրա ամուր կանգնած մարքսիստ անհատը, որպէս թէ կուսակցութիւնը կարողանում է անշեղ և հետևողաբար իր դիրքն ու դերը որոշել բոլոր հասարակական-քաղաքական հին թէ նոր երևոյթների և խնդիրների վերաբերմամբ:

Մենք ցաւում ենք, որ այս կարգի ըստ էութեան տարրական բացատրութիւնների դեռ կարիք ունի պ. Խաժակը, հակառակ դէպքում նա երբէք չէր զետեղի իր յօդուածում վերյիշեալ այն աստիճան անհիմն, նոյնքան և անմիտ տողերը. բայց միւս կողմից հէնց այդ և դրա նման տողերն են, որ պարզում են մեզ մեր հակառակորդի մտաւոր ու քաղաքական ֆիզիօնօմիան:

Մեր բոլոր գրածների ռեզիւմէն հետևեալն է:

1. Պ. Խաժակը չէ հասկացել բիւրօկրատիայի էութիւնը, որակը, յատկանշական գծերը և նրա գոյութեան խնդիրը:

2. Հէնց մասամբ դրա շնորհիւ է, որ նա այնքան սխալ է պատկերացնում իրեն բիւրօկրատիայի, քաղաքական կենտրօնացման և ֆեդերացիայի յատկութիւնները և սխալ հասկանում կենդանի օրինակները արևմտեան Եւրոպայում:

3. Պ. Խաժակը չէ հասկացել կամ չէ ուզեցել հասկանալ Ռուսաստանի սօցիալ-դեմօկրատիայի քաղաքական ծրագիրը, այդ պատճառով էլ նա ընկնում է չափազանցութիւնների և հակասութիւնների մէջ:

4. Մենք ցոյց տուինք տեսական լուսաբանութեամբ և փաստական բազմաթիւ օրինակներով, որ Ռուսաստանի սօցիալ-դեմօկրատիայի քաղաքական մինիմալ ծրագրի իրականացումով ոչ միայն արմատապէս կը վերանայ բիւրօկրատական ռեժիմը և երկրի ծայրերին կը տրուի քաղաքական-կուլտուրական ազատ ինքնուրոյն զարգացման հնարաւորութիւն, այլ և կիրականանան այն սօցիալ-քաղաքական ռեֆօրմները, ինչ որ առհասարակ կարելի է իրականացնել բուրժուական դեմօկրատիզմի, նրա դասակարգային տիրապետութեան շրջանում:

5. Մեր պ. հակառակորդը ունենալով բուրժուական-դասակարգային իդէօլօգիա և մտածողութեան մետաֆիզիքական մեթօդ, ամեն մի քայլափոխում մատնում է ինքն իրան իր հակամարքսիստական սկզբունքներով ու տեսակէտներով: Իսկ որպէս այդպիսին, նա ոչ միայն չէ կարող սօցիալիստական աշխարհահայեացքի արսենալից ուղիղ ճանապարհով զէնքեր վերցնել, այլ և անկարող է վերցրած զէնքերի իմաստն ու գործադրութեան եղանակը ըմբռնել, ինչպէս այդ երևաց նրա առածներից «Начало»-ի վերաբերմամբ:

6. Պ. Խաժակը ունի մինչ անբարեխղճութեան աստիճանը հասցրած [illegible] անելու ընդունակութիւն, ուրիշներին չեղած ու չասած մտքեր ու խօսքեր վերագրելու աններելի վարմունքը ցոյց տուինք մենք բազմիցս: Մի սովորութիւն է դա, որ տրորում է գրական էթիկայի ամենատարրական սկզբունքները և հակասում լօգիկայի հասարակ կանոններին:

Սրանով վերջացնում ենք մեր յօդուածը, մի յարմար առիթի վերապահելով սօցիալ-դեմօկրատական ծրագրի «լայն տեղական ինքնավարութիւն» խօսքերի ընդարձակ, փաստական բացատրութիւնը և ֆեդերատիւ կազմի նպատակայարմար լինել չը լինելու խնդիրը (փաստական լուսաբանութեամբ), ֆեդերալիստների պահանջները ընդհանրապէս Ռուսաստանի և մասնաւորապէս Անդրկովկասի կամ Կովկասի համար: Մեր պօլեմիկան մղվում էր զուտ սկզբունքային հողի վրա, այնպէս որ նրա ծաւալը չէր ների մեզ այդ քան հեռու գնալ այստեղ:

Բ. Իշխանեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Աստրախան, յունվարի 26-ին

Խնդրում եմ չը մերժել զետեղել «Մշակի» մէջ հետևեալը:

Անցած տարվայ նոյեմբերի 23-ին Վիէննայի «Ամսօրեայ Հանդէսի» խմբագրութեանն ուղղել էի հետևեալ նամակը. «Ամսօրեայ Հանդէսի» տարւոյս Թ. 8—9 տետրին մէջ կարդացի Հ. Հ. Հ.-ի «ընդդիմախօսութիւնը», յորում յօդուածագիրը պատասխանել կամենալով Տ. Երուանդ վարդապետին՝ չէ մոռացել և իմ աշխատութեան—«Պատկերայարգութեան» մասին խօսել որոշ ուղղութեամբ, որով և տեղի տուած են թիւր բացատրութիւններ և փաստերու աղաւաղումն, զորս պարզել և ընթերցողներու ուշադրութեան ներկայացնել պարտք պիտի համարեմ ի դէպ ժամանակի»:

Ես կարծում էի, թէ եւրօպական մայրաքաղաքում հրատարակվող «բարոյական և ուսումնական» ամսագրի խմբագրութիւնն ամենից աւելի յարգող պիտի լինէր այն տարրական կանոնին, որ եթէ մի թերթում հրատարակվում է «ընդդիմախօսութիւն» մի որ և է գրուածքի մասին, նոյն թերթումն էլ տեղ պիտի տրվի գրուածքի հեղինակին տալու իր խօսքը: «Ամսօրեայ Հանդէսի» խմբագրութիւնը փոխանակ իմ նամակը տպագրելու, տարւոյս յունվարի համարի «ծաղկեփունջի» մէջ հետևեալ տողերն է գրել. «Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան կը խնդրէ մեզմէ ծանուցանել «Հանդէսի» ընթերցողներուն, որ իբրև թէ Հ. Համբարեանի «ընդդիմախօսութեան» (տ. Հ. Ա. 1905, էջ 281—85) տեղի տուած են թիւրիմացութիւններ, զորս պարզել և ընթերցողներու ուշադրութեան ներկայացնել պարտք պիտի համարէ ի դէպ ժամանակի»: Անշուշտ այս խոստացված պատասխանը կը կարդանք «Արարատի» կամ «Լոյսի» մէջ:

Մի կողմ թողնելով վերջին նախադասութեան տափակ սրախօսութիւնը՝ հարկ եմ համարում վերստին մասնանիշ անել այն, ինչ որ խնամքով թագցրել է «Հանդէսի» խմբագրութիւնը—«փաստերու աղաւաղումն», որով փայլում է Հ. Հ. Հ.-ի «Ընդդիմախօսութիւնն», ինչպէս պիտի ցոյց տամ իր ժամանակին:

Արիստակէս արքեպիսկոպոս

II

Թէօդոսիա, 30-ին յունվարի

Կարդալով «Մշակի» № 17 համարում Սիմֆերօպօլից Հերթեան քահանայի հեռագիրը, կարևոր եմ համարում յայտնել հետևեալը:

Եթէ առաջնորդ Ներսէս արքեպ. յունվարի 17-ին է հեռագրում նահանգապետին, որ նա ճեպով տէր Ներսէսին Էջմիածին ուղարկէ, այդ չէ նշանակում թէ տէր Ներսէսը յունվարի 17-ին Թէօդոսիայում բանտ է արել և կամ խռովութեան պատճառ եղել: Տէր-Ներսէսը 4 ամսից աւելի է, որ վրդովում է Թէօդոսիայի հայ հասարակութեան հանգիստը: Ժողովուրդը ստորագրված դիմում է առաջնորդին և 110 ստորագրութեամբ խնդրում է, որ տէր Ներսէսը հեռանայ Թէօդոսիայից: Առաջնորդը կատարում է ժողովուրդի ցանկութիւնը, և բոլոր գործերը կաթողիկոսին է ուղարկում: Վեհափառը հեռագրում է առաջնորդին, որ տէր Ներսէսին Էջմիածին ուղարկէ, բայց նա զանազան պատճառներով չէ ուզում տեղից շարժվել: Երրորդ անգամ Վեհափառը ստիպված առաջնորդի միջոցով դիմում է նահանգապետին, որ նա տէր Ներսէսին ուղարկէ Էջմիածին. ահա իրողութիւնը. բայց տէր Ն-ը իր յատուկ ճարպիկութեամբ բառախաղութիւն է անում:

Մ. Տարախչեան

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐ

Շուշուց հեռագրում փետրվարի 7-ին.

Երէկ յայտնեցին Բոհաթրեանցին և Շահնազարեանցին, որ նահանգական հաստատութիւնների II հատորի I մասի 30 և 23-րդ յօդ. հիման վրա, նրանք աքսորվում են փետրվարի 16-ին էտապով Օրենբուրգի նահանգը: Խնդրում եմ ամեն միջոց գործադրել այդ պատիժը փոխել տալու համար, ի նկատի ունենալով որ նրանք ոչ մի մեղ չունեն:

Աշոտ եպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվ. 31-ին Բաքւում անձնասպանութիւն գործեց Սալեանի գնդի օֆիցեր պօդպօրուչիկ Լավրենտիյ Բաբունաշվիլին: Հանգուցեալը Բաքուի նոյեմբերի անցքերի ժամանակ յայտնի դարձաւ հայ հասարակութեան իր մարդասէր ու հազուագիւտ ազնիւ քաջագործութեամբ, վերահաս վտանգի ժամանակ փրկելով վայրագ խուժանի ձեռքից 70-ից աւելի հայեր: Թաղումը տեղի ունեցաւ ամսիս 4-ին: Դագաղը հանգուցեալի դիակով Ֆլօտսկի եկեղեցուց մինչև կայարան ուղեկցում էր նրան յարգողների հազարաւոր բազմութիւնը, գլխաւորապէս ուսանող երիտասարդներից բաղկացած: Դագաղի կափարիչի վրա դրված էր ոսկէ սուրը, որ մատուցել էր Բաքուի հայ հասարակութիւնը ի նշան երախտագիտութեան: Կային զանազան պսակներ, ժապաւէնների վրա գրված՝ «հերոսին», «քաջ սպային», «մարդկութեան իսկական բարեկամին», «Բաքուի բոլոր ուսումնարանների աշակերտներից», «փրկված հայերից», «երիտասարդ վրացիներից» և այլն: Հայոց եկեղեցու մօտ հայ հոգևորականութիւնը մաղթանք կատարեց: Ճանապարհին բոլոր ժամանակ դագաղը տանում էին հանգուցեալի ազատած հայերը: Հանգուցեալի մարմինը Քութայիս նահանգն է տարվել: Հանգիստ ոսկորներիդ ազնիւ, մարդասէր ու անձնուրաց եղբայր…

Խուզարկութիւնները Թիֆլիսում համարեա ամեն օր շարունակվում են: Երկուշաբթի, փետրվարի 6-ին, խուզարկութիւն կատարվեց կալուածական վրաց բանկի խանդակի (канава) մէջ, որ դուրս է գալիս դէպի շուկա: Խուզարկութիւնը, ինչպէս իրազեկ աղբիւրից հաղորդում են, կատարվել է ենթադրութեամբ՝ որ այդ խանդակի միջոցով իբր շտաբը օդը թռցնելու կասկած է ծագել:

Ստացանք հետևեալ նոր գրքերը. 1) Ջուլհակներ, Հաուպտմանի, դրամա 40-ական թւականից, թարգ. ռուսերէնից տիկին Ս. Արտեմեան, Ս.-Պետերբուրգ, 1905 թ. գինն է 40 կ. 2) Կեանքից ներկայ և ապագայ զրոյցներ, Բեբելի, թարգ. ռուսերէնից օր. Սօֆիա Շահնազարեան, Թիֆլիս, 1905 թ. գինն է 10 կոպ. 3) Յեղափոխականներ (Վարդան Գօլոշեան և Յ. Ագրիպասեան), Ժնև, 1905 թ. գինն է 20 սանտիմ. 4) La Question Arménienne (Հայոց հարց) Ե. Ակնունի, հրատ. Եւրոպայի հայ ուսանողական միութեան, Ժնև, 1905 թ. գինն է 30 սանտիմ. 5) Формы рабочаго движенія (Բանւորական շարժման ձևերը) Վ. Տօտոմեանց, Պետերբուրգ, գինն է 80 կոպէկ. 6) Տարեցոյց 1906 թ. Մ. Զմշկեանի, Թիֆլիս, 1905 թ. գինն է 30 կոպէկ. 7) Գալօ, Աֆօ, և Խաչան, Ս. Քամալեանի, II տպագրութիւն, Թիֆլիս, գինն է 12 կոպէկ:

Կիրակի, փետրվ. 5-ին, Երևանեան հրապարակի վրա գտնվող Կաֆիեվի մանուֆակտուրային ապրանքների խանութը կողոպտում են վերնայարկից անյայտ գողերը և ներս մտնելով տանում են մինչև 3000 րուբլու ապրանք, մեծ մասը՝ կերպասեղէն: Այս յանդուգն գողութեան մէջ, որը կատարված է բակի կողմից, կասկածի է ենթարկված դռնապանը, որը և ձերբակալված է:

Աղէտից վնասված հայ ընտանիքների օգտին ստացանք. 1) պ. Ռոստոմ Մարտիրոսեանից, որը նոյեմբերից վճարում էր ամսական 10-ական րուբլի,—20 ր. փետրվ. և յունվար ամիսների վճար. 2) Մելիտոպօլի հայ հասարակութիւնից Գաբրիէլ քահ. Տէր-Սիրեանի ձեռքով ծնընդեան տօնին դանձանակատուփով հաւաքած 45 ր. 3) Մեծ-Ղարաքիլիսայից—Գէորգ Մէլիք-Գէորգեանից 166 ր. 38 կ. 4) Բերդից—Շուշանիկ Անանեանից իր դստեր մկրտութեան առիթով 40 ր. 5) Դուրավկայից Թ. Ն. Մարգարեանից 30 ր. 6) Արմաւիրի հայ զինուորներից 10 ր. 7) Բամբէթ-Կոֆուլից—Մ. Իւզբաշեանից 30 ր. 8) Շուշեցի Աստուածատուր Միքեանից 30 ր. 9) Բաքուից—Թագուհի Միրզաբէկեանից 40 ր.:

Փօթիի քաղաքագլուխը հեռագրել է Երևանեան գնդի գնդապետ Նէյշլեաւէրին հետևեալ հեռագիրը. «Փօթիի քաղաքի ազգաբնակութեան անունից պատիւ ունիմ խնդրելու ձեզ՝ թողնել այստեղ քաղաքապահ զօրք, գոնէ ձեր հրամանատարութեան յանձնված գնդի մի հարիւրեակ, իսկ նրան գլխաւոր նշանակել կապիտան Պեգաշենկոյին: Ձեր զինուորների խիստ կարգապահութեան և կապիտան Պեգաշենկոյի խելացի կարգադրութեան (որ տեղական հանգամանքների հետ լաւ ծանօթացել է արդէն) է պարտական քաղաքը իր կատարեալ հանգստութեամբ և օրինակելի կարգապահութեամբ»:

«Кавказъ» թերթը ստացել է իր թղթակցից հետևեալ հեռագիրը. «Պետերբուրգ, 6 փետրվարի: Երկրագործութեան մինիստրութեան գլխաւոր կառավարիչ Կուտլէրի հրաժարականի պատճառ համարում են մասնաւոր հողատէրերի հողերը խլելու՝ գիւղացիներին բաժանելու ծրագիրը»:

«Сынъ Отечества»-ի խմբագիր պ. Իւրիցինը, որը բանտարկվել է «Жупелъ»-ի 2-րդ համարի հրատարակութեան համար, լրագրերի ասելով, ենթարկել է իրան սովամահութեան և 7 օր ոչինչ չէ կերել:

Մեզ հաղորդում են, որ «Շուշանիկ» պիեսի ներկայացման բոլոր տոմսակները արդէն վաճառված են, ուստի գերասանական խումբը որոշել է կիրակի օր կրկնել ներկայացումը:

«Новое Обозрѣніе» թերթի խմբագիր-հրատարակիչ Ն. Ի. Քալանթարովը, ինչպէս մեզ հաղորդում են, խնդրում է եղել ժամանակաւոր գեներալ-նահանգապետին վերացնելու թերթի հրատարակութեան արգելքը հէնց զինուորական դրութեան միջոցին:

Պետական կօնտրօլերից պետական խորհրդի ստացած տեղեկութիւնների համեմատ, ռուս-ճապոնական պատերազմի ծախսի գումարը եղել է 1,966,600 հազար րուբլի, այնպէս որ 1904 թւին ծախսվել է 840 միլիօն, իսկ 1905 թւին—1,126, 600 հազար րուբլի: Պատերազմի երկրորդ, ընդամենը մի քանի ամիս տեւող շրջանում այդքան մեծ ծախս անելու գլխաւոր պատճառը նաւատորմի վրա եղած ծախսերն էին: Նապօլէոնի հետ վարած պատերազմը մէկ միլիարդ րուբլի թանգ է նստել ռուս-թիւրքական պատերազմից: Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ 1877 թւին ռուսները ծախսեցին 534 միլիօն, իսկ 1878 թւին—471,400 հազար րուբլի:

Բարձրագոյն հրամանով Կովկաս ուղարկված զինուորական խորհրդի անդամ ինֆանտերիայի գեներալ Դուկմասով Պետերբուրգ վերադարձաւ և զեկուցում ներկայացրեց իր ուղևորութեան մասին:

Լրագիրներում արդէն տպված էր, որ մահմեդականները Պետերբուրգում հիմնում են մի մեծ քաղաքական լրագիր: Լրագրի մի աշխատակից խօսակցութիւն է ունեցել մի մահմեդականի հետ և ասել է, որ լրագիրը հիմնվում է մահմեդականների շահերը պաշտպանելու համար: Լրագիրը պէտք է պաշտպանէ նրանց, որոնք մահմեդականների վրա հազարաւոր սուտ լուրեր են տարածում: Սակայն մինչև լրագրի հիմնելը՝ վճռել ենք ոչինչ չը խօսել այդ սուտ լուրերի մասին:

Թէ արդեօք ինչքան ժամանակ է հարկաւոր ռուս ժողովրդին Պետական Դումայի մտքի հետ ընտելացնել, այդ հարցին, ասում են, ներքին գործերի մինիստր Դուրնովօն իր մէկ ծանօթին զարմանալի պատասխանել է. «Ինչ Պետական Դումա, հարկաւոր է դեռ 10 տարի ժողովրդին ընտելացնելու այդ մտքի հետ.»

Յունվարի 30-ին և 31-ին Վարշավայում վարչական կարգով բանտարկված են 58 հոգի և որ մի քանի օրում այդ քաղաքում 1450 մարդ է ձերբակալված:

«Черн. В.» լրագրում տպված է. «Ասում են, որ Արաշայում մի անյայտ մարդ վիրաւորել է Երևանեան գնդի առաջին բատալիօնի հրամանատար Աչիկօվանին: Լուր է պտտում, որ Քութայիսից Արաշա է գնում զօրքով գեներալ Ալիխանով»:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

10-րդ քաղաքամասի Գօգօլեվսկի փողոցում, Էնֆիաջեանցի ծխախոտի գործարանի ցրիչ Վասիլիյ Եգիզարովը ենթարկվեց երկու չարագործների յարձակման, որոնք կողոպտելով նրանից օրվայ հաւաքած 536 ր.—91 կոպ-ը և հասցնելով գլխին բութ գործիքով վէրք կամենում էին փախչել, բայց շնորհիւ թաղային ոստիկանի—չարագործներից մէկը բռնվեց, իսկ միւսին յաջողվեց բայց և այնպէս անյայտանալ: Բռնվածին ոստիկանատուն տանելով, որտեղ իմացվեց նրա ով լինելը—Զօխատուրի գիւղի բնակիչ Դաւիթ Երիստաւի—իշխանների ցեղից, որ ժամանակաւորապէս ապրում էր Թիֆլիսում «Մարսել» հիւրանոցում: Մեղադրվողին յանձնել են դատաւորին:

Փետրվարի 3-ին, 9-րդ քաղաքամասի ոստիկանատան մօտ՝ Բէհբութեան փողոցում, № 22 տան մէջ ապրող [illegible] Աղարէկեան Աղաջանեան և յայտնեց, որ գիշերվայ մօտ ժամը 10-ին, երբ նա անց էր կենում Նիկօլաեվսկի փողոցով, Այվազովի տան մօտ իրան մօտեցաւ անյայտ մի մարդ և պահանջեց նրանից փող, ապա բռնելով ձեռքերից թեւը՝ գործիքով հարուած հասցրեց գլխին և մէջքին և կամենում էր փախչել, Բայց ճանապարհին բռնվեց թաղական ոստիկանից դռնապաների օգնութեամբ: Բռնվածը տարվեց ոստիկանատուն և երևաց Երևանեան նահանգի բնակիչ Գէորգ Թադէոսեան Մինասեան, որը հարցաքննութիւնից յետոյ յանձնվեց դատաւորին:

Փետրվարի 5-ին, երեկոյեան մօտ ժամը 8-ին, անյայտ մարդիկ, որոնցից 3-ը հագել էին 44-րդ դրագունսկի-Նիժեգօրօդսկի գնդի զինուորների զգեստ, իսկ երկուսը իրանց հասարակ հագուստով, փափախները ծածկած, զինված, մտնելով այրի Սառրա Նազարեան Իգմիրեանի բնակարանը (Լերմոնտովսկի փող. № 10 սեփ. տուն) ասելով իբր օֆիցերը ուղարկել է խուզարկելու նպատակով, սկսեցին խուզարկել բնակարանը, բայց նրա աղջիկ Հեղինէ Իգմիրեանը դռնապանին զանգահարելով, կանչում է, որից յետոյ աղմուկ է բարձրանում. չարագործները անմիջապէս հեռանում են. Նրանք խօսելիս են եղել վրացերէն: Նրանցից չեն կարողանում ոչինչ գողանալ:

Փետրվարի 6-ին, ցերեկվայ մօտ 5 ժամին 9-րդ քաղաքամասի ոստիկանատանը դիմեց պարսկահպատակ Սուլթան Սալմազովը, որը բնակվում է Նիկօլաեվսկայա փողոցի վրա գտնվող Արութինովի տանը, և յայտնեց, որ այդ օրը առաւօտեան 8—9 ժամին, անյայտ չարագործները իր կողպած բնակարանի կողպէքը կոտրելով, գողացել են 6 անցագիր, որոնք պատկանում էին իրան և իր հետ ապրող 5 հոգուն, նոյնպէս պարսկահպատակների, և որպէս անցագիրները տրված էին Թիֆլիսի նահանգապետից այս տարի. բացի դրանցից, գողացել են 15 րուբլի կանխիկ փող և մի քանի իրեղէններ:

Փետրվարի 6-ին Թիֆլիսի մանրավաճառ [illegible] Դիմամովը, որի խանութը գտնվում է Պուշկինսկի փող. Ամիրովի տանը, բակի կողմի եղած պատուհանը կոտրելով անյայտ չարագործները, մտել են խանութը և գողացել են մօտ 40 րուբլու փող:

Փետրվարի 6-ին Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Միքայէլ Անդրիասեանը մտաւ 5-րդ քաղաքամասի ոստիկանատուն և յայտնեց, որ նրա խանութի ([illegible] շարքում, սեփ. տուն) յետևի կողմը եղած դուռը կոտրելով անյայտ չարագործները, գողացել են փայտէ կասսայից 160 րուբլի հին փողեր:

Մետեխսկի փող. ապրող Թիֆլիսի բնակիչ Ալէքսանդրը Ջանշեանը Գօրու բնակիչ Դաւիթ Ա. Պավլենովի հետ վիճելիս՝ ատրճանակի հարուածով վիրաւորեց վերջինիս քունքից, իսկ ինքը անյայտացաւ. վիրաւորվածին հասցրած է բժշկական օգնութիւն:

Փետրվարի 4-ին, գիշերվայ մօտ 12 ժամին 6-րդ քաղաքամասում, Տելէտսկի փող. վրա իր բնակարանի մօտ սպանված է ատրճանակի 2 հարուածով Բօզլի գիւղի բնակիչ Եգօր Դարչեբովը հետևեալ հանգամանքներում. Դարչեբովը քէֆ է անում Սամեգովի գինետանում: Երեկոյեան դէմ, երբ հարբած էր, նա գնաց տուն, ուր 1 անգամ ատրճանակ արձակեց, իսկ յետոյ, բռնելով մի ձեռքում դաշոյն, իսկ միւս ձեռքով ատրճանակ արձակելով, դուրս եկաւ բնակարանից և գնաց դէպի Սամեգովի գինետունը: Գիշերվայ ժամը 12-ին 3 անգամ ատրճանակ արձակվեց, որի ձայնից եկան 6-րդ քաղաքամասի գօրօդովոյները, որոնք գտան Դարչեբովին սպանված դրութեան մէջ. նա 2 տեղից գնդակահարված էր, մէկը ձախ կողքից, միւսը թիկից և 2 տեղից էլ դաշոյնով էր վիրաւորված: Դիակը տարված է Միքայէլեան հիւանդանոցի դիահերձատանական բաժինը:

Փետրվարի 4-ին, առաւօտեան ժամի 9-ին 5-րդ քաղաքամասի ոստիկանատունը մտաւ Ադելխանովի ակցիօներական ընկերութեան մագազինի, որ գտնվում է Արմեանսկի բազարում՝ քաղաքային կրէդիտի ընկերութեան տանը, կառավարիչը, Թիֆլիսի քաղաքացի Իվան Գրիգորովիչ Ծովյանով, և յայտնեց, որ փետրվարի 4-ի գիշերը, մառանի պատը քանդելով տան բակի կողմից, անյայտ չարագործները ներս են մտել ու գողացել 200 րուբլու արժողութեամբ կաշի, ոտնամաններ, 40 րուբլի արժեցող, և սեղանի փայտէ դրամարկղից 170 րուբլի կանխիկ փող, Թիֆլիսի երեխաների խնամատարութեան ընկերութեան արկղիկը, որի մէջ որքան փող կար, յայտնի չէ:

Քաղաքի 7-րդ մասի թաղապետ Ամէնալեօվը քաղաքապահ Կօկայի և Մոկուշէվիչի աջակցութեամբ բռնել է Երուանդ Արութինով և Սամսոն Բիբիլուրի գիւղացիներին երկու խալիչաներով, որոնք գողացված են Գաբրիէլ Արութինովից, 60 րուբլի արժողութեամբ: Կալանաւորվածներին յանձնել են իշխանութեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Քաղաքական հօրիզոնը շարունակում է մթագնված մնալ: Դիպլօմատիական շրջանների հոգացողութեան գլխաւոր առարկան այժմ Մարօքօյի միջազգային կօնֆերենցիան է, որ գումարված է Սպանիայի Ալճէզիրաս քաղաքում:

Մարօքօյի հարցը քիչ էր մնացել, որ անցեալ տարի զինաւորված ընդհարումն առաջ բերէ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ: Եւ եթէ չը լինէր սօցիալիստների միջամտութիւնը, որոնք տապալեցին ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դելկասէին հրաժարական տալ, գուցէ դեռ անցեալ տարի ամառը թնդանօթները որոտային Եւրոպայում: Վերջապէս, շնորհիւ խաղաղասէրների ջանքերին, հնարաւոր եղաւ ընդհարման առաջն առնել և վէճը յանձնել կօնֆերենցիայի քննութեան: Մի անգամ ևս խաղաղասիրական ոգին յաղթանակեց, և պատերազմասիրական աղաղակները տեղի տուեցին այն վեհ սկզբունքի առաջ, թէ ազգերը, պետութիւնները իրանց փոխադարձ վէճերը կարող են կարգաւորել ճիշտ այնպէս, ինչպէս մասնաւոր անհատները, այն է իրաւարարական ճանապարհով:

Ահա մօտ մի ամիս է, որ գումարված է կօնֆերենցիան, որին մասնակցում են բացի վիճող պետութիւնների՝ Ֆրանսիայի և Գերմանիայի, նաև շահագրգռված և չէզօք մեծ պետութիւնների—Անգլիայի, Ռուսաստանի, Միացեալ-Նահանգների, Սպանիայի, Աւստրիայի, Իտալիայի ներկայացուցիչները: Մինչև այժմ մեծ յոյս կար, որ կօնֆերենցիան յաջողապէս կը լուծէ վէճի առարկայ խնդիրները, սակայն վերջերս «Հաւասի» գործակալութեան հաղորդած տեղեկութիւնները կօնֆերենցիայի ընթացքի մասին ոչ միայն մխիթարական չեն, այլ և յուզիչ: Մինչև որ կօնֆերենցիան քննում էր երկրորդական հարցեր, երկու կողմից ևս փոխադարձ զիջումներ լինում էին, բայց հէնց որ սկսվեց գլխաւոր հարցերի քննութիւնը, ընդհարումը Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ սուր կերպարանք ստացաւ: Այս րոպէին, ինչպէս հաղորդում է «Հաւասը», դրութիւնը այնքան լարված է, որ ամենափոքր անզգուշութիւնը կարող է լուրջ բարդութիւններ առաջ բերել:

Արդ, գլխաւոր հարցը, որի պատճառով այժմ սուր անհամաձայնութիւն է տիրում վիճող պետութիւնների՝ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ—ոստիկանութեան հարցն է: Գերմանիան պահանջում է, որ Մարօքօյի մէջ պէտք է հաստատել միջազգային ոստիկանութիւն, իսկ Ֆրանսիան յայտնում է, որ այդ տեսակ կազմակերպութիւնը նա կը համարէ վտանգաւոր իր շահերի համար:

Խնդիրը դրված է այնքան խիստ և շեշտակի, որ դժուար է որ և է կօմպրօմիս մտածել: Ինքն ըստ ինքեան ոստիկանութեան խնդիրը չէ կարևոր, այլ այն, որ այդ խնդրի հետ սերտ կերպով կապված է Մարօքօյի ապագայ բախտի խնդիրը: Ամենքը համաձայն են, որ այլ ևս չէ կարելի թողնել Մարօքօն իր այժմեան անիշխանական վիճակի մէջ: Ֆրանսիան, որին պատկանում է Մարօքօյին սահմանակից Թունիսը, պահանջում է, որ ոստիկանութեան կազմակերպութիւնը իրան յանձնվի, ուրեմն դրանով՝ նաև երկրի վարչական կազմակերպութիւնը, իսկ Գերմանիան պահանջում է, որ ոստիկանութիւնը լինի միջազգային: Գերմանիան ուղղակի մեղադրում է Ֆրանսիային, որ սա ձգտում է երկրորդ Թունիս դարձնել Մարօքօն և Ֆրանսիան էլ չէ ծածկում, որ նա մտադիր է «Թունիսացնել» Մարօքօն և պահանջում է, որ Մարօքում ռեֆօրմներ մտցնելու գործը իրան յանձնվի: Պարզ է, որ այդպիսի անհաշտ պահանջները սուր ընդհարումն առաջ պէտք է բերէին, ուստի և ներկայումս պատերազմի վտանգը ոչ միայն հնարաւոր է և հաւանական, այլ անխուսափելի, քանի որ թէ Ռուսաստանի և թէ Միացեալ-Նահանգների ջանքերը՝ հարթել վէճը անյաջող են անցել:

Ուրեմն, առ այժմ, կօնֆերենցիայի անյաջողութիւնը անկասկած է: «Times» լրագիրը այդ անյաջողութիւնը բացատրում է նրանով, որ Ռուսաստանը և Աւստրիան շատ երկրորդական դեր գրաւեցին կօնֆերենցիայի մէջ և հնարաւոր միջոցներ ձեռք չառան վիճողներին հաշտեցնելու համար:

Կիսապաշտօնական «Temps» լրագիրը յայտնում է, որ Ֆրանսիան կտրուկ կերպով հերքում է որ և է միջազգային կազմակերպութիւն, որ Գերմանիան առաջարկում է Մարօքօյի հարցի լուծման համար: Գերմանական մամուլի մի մասը թէև ընդունում է, որ Մարօքօն քաղաքակրթելու պաշտօնը պէտք է ստանձնէ միայն Ֆրանսիան, և Մարօքօյի ապագան կարող է ապահովվել միայն ֆրանսիական հովանաւորութեամբ, բայց դրա փոխարէն պահանջվում է, որ Գերմանիան վարձատրութիւն կամ հատուցումն ստանայ Փոքր-Ասիայում: Ուրիշ խօսքով, Փոքր-Ասիայի հովանաւորութիւնը յանձնվի Գերմանիային:

Եւ զարմանալի չէ, որ այդպիսի պահանջները կարող են վտանգել համաշխարհային խաղաղութիւնը:

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ենզէլի, յունվարի 31-ին

Պարսկաստանի ամեն կողմերը, որպէս նաև Րէշտ և Ենզէլի լցված են կովկասցի փախստական թուրքերով: Գողութեան և մարդասպանութեան համար իրանց երկրից փախուստ տուած աւազակաբարոյ այդ թուրքերը բոյն դնելով Պարսկաստանի զանազան խուլ ու մութ անկիւններում և տեղական խաւար ժողովրդի միամտութիւնից օգուտ քաղելով՝ աշխատում են վրդովել խաղաղ ժողովրդի կեանքը, յուզել, լարել նրանց քրիստոնեաների դէմ:

Անցեալները մի խումբ պարսիկներ, առաջնորդութեամբ բաքուեցի մի քանի սրիկայ թուրքերի, գնում են տեղիս Մուշտայիդի մօտ և յայտնում նրան Կովկասում կատարված դէպքերի մասին, աւելացնում են՝ «հայերը այնտեղ կոտորում են անմեղ իսլամի ամբողջ զաւակներին, այրում, հրդեհում, կրակի ճարակ են դարձնում մեծ մարգարէի և ս. իմամների օրհնված մզկիթները, ուրեմն թոյլ տուէք մեզ, ո՛վ մեծ մուշտայիդ, որ մենք Պարսկաստանում վրիժառու լինենք այդ դեւաւոր հայերից: Մենք սպասում ենք մեծ մարգարէի տեղապահ և ս. իմամի արժանաւոր ժառանգ Նաջաֆի Նասրող աղա մուշտայիդի հրամանին, թող նա գրէ, թող նա յայտարարէ, տես ինչեր պիտի անենք Պարսկաստանում մեր թշնամիների գլխին»:

Բարեսիրտ մուշտայիդը, լաւ հասկանալով նրանց միտքը ու սրիկայ լինելը, հետևեալն է պատասխանում. «Դուք սխալվել էք, որ այդպիսի դիմումներ էք անում ինձ, որովհետև թէ Նաջաֆի Նասրող աղան, կրօնապետը, թէ ես, և թէ բոլոր մեր հոգևորական դասը լաւ տեղեկութիւն ունենք Կովկասում կատարվող դէպքերի մասին, և գիտենք թէ ով է մեղաւորը: Գնացէք հանգիստ ձեր տեղերը նստեցէք, եթէ չէք ուզում, որ այստեղ էլ մեր խաղաղ երկիրը, մեր խաղաղ կեանքը վրդովվի և այստեղ էլ մեր աղօթատեղիները կրակի մատնվի»: Այսպէս խռովարարներին խրատելով ցրվում է իրանց տեղերը:

Ահա մօտենում են մուհարամի ազի օրերը, վտանգի, կոտորածի և վրէժի օրեր են դրանք. վայրենաբարոյ ամբոխը, լի կրօնական զգացմունքներով, մի ձեռին սուր, սպիտակ պատանը հագին, արիւնաթաթախ, գոռում է իրան իր սրբազան նահատակների սիրոյն, անէծք նզովք կարդալով նրանց թշնամիներին, և փողոցից փողոց անցնելով վրէժ, վրէժ է գոռում: Պարսկաստանում այդ օրերը վտանգ են սպառնում ամենքին, մանաւանդ քրիստոնեայ տարրերին, որովհետև կրօնական պատերազմ է և դատաստան չը կայ: Անցեալ տարվայ փորձերը ցոյց տուին թէ ինչպէս մուհարամի օրերին Պարսկաստանի ամեն տեղերում չարամիտներ և խռովարարներ գուցէ մեծ ընդհարում առաջացնէին պարսիկ և քրիստոնեայ տարրերի մէջ, եթէ կառավարութիւնը ամեն միջոց ձեռք չառնէր նրանց զսպելու: Աչքի առաջ ունենալով անցեալ տարվայ փորձերը և խռովարարների ամենօրեայ դէպի մեզ ունեցած վատ զգացմունքները, պէտք է պատրաստվենք, պէտք է զգոյշ լինենք:

Յունվարի 20-ին Ենզէլի Հ. Յ. Դ. կանանց խումբը յօգուտ տեղիս ս. Վարդանանց միդասեան երկսեռ դպրոցի տուեց գրական և երաժշտական «երեկոյթ»: Սրահը լիքն էր բազմութեամբ: Բացի հայերից ներկայ էին տեղիս բիւրօների, շոգենաւերի և զանազան առևտրական տների ռուս ներկայացուցիչները: Բեմի շրջանակը պատած էր ծաղկեայ պսակով, իսկ սրահի պատի վրա կախ էր արված Մայր Հայաստանի և անմոռանալի Քրիստափոր Միքայէլեանի պատկերը: Երեկոյթին երգում էր պ. Գրիգոր Եղիազարեանի պատրաստած քառաձայն խումբը. իսկ դաշնամուրի (պիանօ) վրա նուագում էր տ. Ա. Մէլիք Սարգսեանը։ Ուսուցիչ պ. Կոստանդին Վարժապետեանը խօսեց կանանց իրաւունքի և գործունէութեան մասին,նաև Դաշնակցութեան գործունէութիւնը Կովկասում։ Աղօթք (պատկեր) արտասանեց տ. Ար. Սաֆարեանը, որը և լաւ տպաւորութիւն թողեց ընդհանուրի վրա։ Բուֆէտը սկզբից մինչև վերջ կառավարում էր Տ. Կ. Ղազարեանը։ Երեկոյթը բաւական լաւ և շքեղ անցաւ։ Եղան նաև վիճակահանութիւն և հայկական ու եւրոպական պարեր։ Հանդիսականները ուրախ և լաւ տպաւորութեան տակ հեռացան։ Արդիւնքը բաւարար էր։Գովելի է տիկինների եռանդը։

Գ. Ս.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 փետրվարի

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 5 փետրվարի։ «Պոտեոմկինի գործը վերջացաւ։ Արդարացված են մի կօնդուկտոր և 24 նաւաստի։ Ութ հոգի դատապարտված են արեստանտսկի բաժանմունքները ուղարկվելու երկու տարի ժամանակով, 2-ը՝ մի տարի, իսկ մէկը ծովային բանտի՝ 3 ամսով։ Ծառայութիւնից արտաքսվում են գեկտոր Գաշէնկօ, կօնդուկտոր Մուրզակ և զրկվում իրանց աստիճաններից։ Մահվան են դատապարտված՝ կախաղանի միջոցով՝ երկու հոգի, մէկին էլ կախաղանը փոխարինել են 20 տարվայ տաժանակիր աշխատանքի, համաձայն հոկտեմբերի 21 մանիֆէստի։ Դատարանը միջնորդութիւն է յարուցել պատժից ազատելու մեղադրվող Խօցէնկօյին, որը Օչակօվի վրա զրկվել է մի ոտքից, իսկ միւսների պատիժները պակսեցնելու։

ՎԱՐՇԱՎԱ, 5 փետրվարի։ Քաղաքային ակումբում 100 ընտրողների նախընտրական խորհուրդը կայացաւ։ Ցանկարծ ներս մտան 30 սօցիալիստներ։ Սկսվեց աղմուկ ու դմփոց, ատրճանակների գնդականհարութիւն, բնակարանի ջարդ ու փշուր անել։ Ժողովը անմիջապէս փակվեց։

ՄԵԼԵԿԵՍ, 5 փետրվարի։ Կայացաւ Թուրք հոգևորականութեան համաժողովը Թուրք գիւղացիների հետ միասին։ Մասնակցում էին մօտաւորապէս 500 հոգի։ Որոշված է շուտով գործադրելու հոկտեմբերի 17-ի մանիֆէստը։ Վճռված է խնդրամատոյց լինել, որպէս զի թոյլ տան Թուրքերին էս մասնակցելու Պետական Դումայի ընտրութիւններին համեմատ իրանց թւական քանակութեան, յանձնել Դումային մահմեդականների պէտքերը։ Վճռված է հիմնել մահմեդական ժողովրդական մի կուսակցութիւն, և միանալ Պետերբուրգում կայացած համառուսական մահմեդականների համաժողովի կարծիքներին։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 6 փետրվարի։ Վիլհէլմ կայսրը, նաւ նստելուց առաջ, խօսակցութիւն ունեցաւ ֆրանսիական պատգամաւորութեան պարագլուխ Բարօն Դեկուրսելի հետ։

ՊԱՐԻԶ, 5 փետրվարի։ Ֆալիէրին Լիւքսէնբուրգի պալատից մինչև Ելիսեան պալատը գնալիս ճանապարհին ողջունում էր ահագին բազմութիւնը։ Նախկին նախագահ Լուբէն դիմաւորեց նրան նախագաւթի դրանը և տարաւ դեսպանների դահլիճը, որտեղ գտնվում էին սենատի նախագահ Դիւմօր, մինիստրները, երկու պալատների բիւրօյի անդամները և նախագահի սվիտայի սպաները և զինւորական և քաղաքացիական պաշտօնեաները։ Ապա երկուսով, Ռուվիէյի հետ միասին, ուղևորվեցին դէպի Լուբէյի նոր բնակարանը։ Ահագին բազմութիւնը ուռաներով էր դիմաւորում երկու նախագահներին։

ՄՕՍԿՎԱ, 5 փետրվարի։ Անկախների քաղաքական ակումբի նիստում նախագահ ընտրվեց իշխան Գոլիցինը։

ՄՕՍԿՎԱ, 5 փետրվարի։ Կայացաւ առևտրա-արդիւնաբերական կուսակցութեան համաժողովը։ Ներկայ էին 300 պատգամաւորներ։ Բարշչեվը, խօսելով կուսակցութեան նպատակների մասին, բացատրեց թէ ինչ դրութիւն պէտք է պահպանեն կուսակցութեան ներկայացուցիչները Պետական Դումայում, որ պէտք է աջակցեն կառավարութեանը իրագործելու հոկտեմբերի 17-ի մանիֆէստը, պահպանեն Ռուսաստանի ամբողջութիւնը, ազատութիւնների կանօնաւորելը, ժողովրդի լուսաւորութիւնը, եկամտային տուրքեր նշանակելը, տեղական ինքնավարութեան ընդարձակումը, մասսային բարեկեցութիւնը, ագրարական հարցի լուծումը, մասնաւոր սեփականութեան պահելու սկզբունքը, գիւղացիների իրաւունքների հաւասարութիւնը միւս դասակարգերի հետ և բանւորական օրէնսդրութեան բարեփոխելը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ «Нов. Вр.» հաղորդում է, որ մինիստրների խորհուրդը վճռեց շտապեցնել հոկտեմբերի 17-ի մանիֆէստով շնորհված ազատութիւնների մասին եղած օրէնքների կազմելը։ Առաջի հերթում գտնվում են անձի և բնակարանների անձեռնմխելիութեան օրէնքները։ Ընդհանրապէս ենթադրում են մտցնել նոր օրէնքները մինչև Դումայի գումարումը։

7 փետրվարի

ՊԱՐԻԶ, 6 փետրվարի։ Ֆալիէրին ուղղած իր ճառի մէջ Ելիսեան պալատում Լուբէն ասաց, որ Ֆալիէրին շրջապատող համակրանքները և աջակցութիւնը, որ կը հանդիպէ նա բոլոր բարի քաղաքացիների կողմից ապահովում են նրա նախագահութեան յաջողութիւնները յօգուտ հասարակապետութեան և հայրենիքի։ Ապա Լուբէն բարեմաղթեց լաւ օրեր Ֆրանսիային և հասարակապետութեան պրէստիժը պահպանելուն և բաղդաւորութիւն իրան Ֆալիէրին։ Յիշեց, որ իր նախագահութեան սկզբներում նա զուրկ չէր փորձութիւններից, երբ ստիպված էր հրաւիրելու պարլամենտին աջակցել վերականգնելու խաղաղութիւնը, միաբանեցնելու ժողովրդին գործելու սօցիալական զարգացման համար և հասարակապետութեան համակրանքը սաստկացնելու երկրից դուրս։ Պարլամենտի նպատակն է այժմ բարելաւել տառապեալների և ստորացեալների վիճակը։ Պարլամենտի աջակցութեամբ Ֆրանսիայի յարաբերութիւնները ուրիշ ազգերի հետ լաւ են եղել և թոյլ է տալիս յուսով նայելու ապագային։ Ֆալիէրը պատասխանեց, որ շատ յուզված է իրան ցոյց տուած ընդունելութիւնից և մտնում է Ելիսեան պալատը, ինչպէս որ պարտականութիւն կատարելու համար և կաշխատէ միշտ, ինչպէս Լուբէն և անձնանուիրութեամբ կը ծառայէ Ֆրանսիային ու հասարակապետութեանը։ Վերջացնելով՝ նա խնդրեց պարլամենտին աջակցութիւն ցոյց տալ, հաւատով ու կարեկցութեամբ վերաբերվել։ Ռուվիէն յանձնեց իր կաբինէտի արձակման մասին խնդիրը։ Ֆալիէրը խնդրեց մնալ։ Պատուի լէգիօնի գլխաւոր կանցլերը երեկոյեան գնաց Ելիսեան պալատը յանձնելու օրդենի մեծ շղթան և յայտարարելու նրան վերջինի մագիստրոս։

ԼՕՆԴՕՆ, 8 փետրվարի։ «Դէյլի-Տելեգրաֆ»-ը հաղորդում է Տօկիօյից հետևեալ հեռագիրը, որ Պէկինից ստացված տեղեկութիւնների հիման վրա, Չինաստանի և Ռուսաստանի լիազօրների մէջ խորհրդակցութիւն է եղել, որի միջոցին Չինաստանը բողոքել է Մանջուրիայում հանքերի աշխատանքները վերսկսելու համար։ Ռուսաստանը ներկայացրել է Մանջուրիայի իշխանութեան հետ կապած պայմանագիրը, որին չէ համաձայնվել Չինաստանը առարկելով, որ յիշեալ ներկայացուցիչները հեռացված են ծառայութիւնից և նրանց հետ կապած պայմանագիրը ոյժ չունի։ Ռուսաց լիազօրն ասաց, որ պայմանագիր կապելու ժամանակ նրանք պաշտօնում են եղել, ուստի օրինաւոր է համարում և շարունակում է աշխատանքները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Լուսաւորութեան մինիստրը փետրվարի 20-ին հրաւիրում է բոլոր դիրէկտօրներին և ընտրված պրոֆէսօրներին, ընդամենը 40 հոգի, յիշեալ ուսումնարանների կանօնադրութիւնը կազմելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Ներքին գործերի մինիստրը կարգադրել է Խարկովի համալսարանի պրոֆեսօր Գրէդէսկիւլին աքսորել Արխանգելսկի խուլ գաւառներից մէկը երկու տարի ժամանակով։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը թոյլտւութիւն է խնդրել մինիստրական միդասեան և երկդասեան դպրոցները, որոնք պահվում են պետական հաշւով, յանձնել գաւառական ուսումնարանական խորհուրդներին, մի և նոյն հիմունքներով ինչ որ զեմստվօներինն է։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 6 փետրվարի։ Պատգամաւորների պալատի ժողովում փոխ-նախագահ Րակօվսկին բողոքում է այն բանի դէմ, որ շէնութիւնը շրջապատված է զօրքով, յայտնում է, որ նախագահը ստացել է գեներալ Նիւերից նամակ, որի մէջ վերջինս հաղորդում է յայտնի տեղեկութիւնը։ Րակօվսկին առաջարկում է վերադարձնել նամակը—առարկելով, որ նա չէ կարգացված, որովհետև գեներալ Նիւերի նշանակումը եղել է սահմանադրութեան հակառակ։ Առաջարկութիւնն ընդունվեց։ Րակօվսկին տուեց—այն ժամանակ նախագահութիւնը փոխ-նախագահ Ցօլգարուն, որը առաջարկեց հրաւիրել հետևեալ ժողովը միւս օրը։ Առաջարկութիւնը ընդունված է. ժողովը փակվում է։ Պատգաւորները ցրվում են։ Նրանցից յետոյ երևաց ոստիկանութիւնը։ Դահլիճում առաջին հետևակ վաշտի հրամանատար Րօնվէնդօվ Ֆաբրիցիուսը—ուղեկցութեամբ չորս զինւորների կարդում է կայսրի ինքնագիր նամակը, որ արձակում է պալատը։ Պատշգամբներում կանգնած ժողովուրդը բարձրացնում է սոսկալի աղմուկ, երգում է Կօշուտի օրհներգը։ Միջանցքներում զինւորները ցրում են պատգամաւորներին։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 6 փետրվարի։ Պարլամենտի շէնքում հաւաքվեցին 840 ոստիկանական պաշտօնեաներ, 200-ը հեծեալ։ Պարլամենտի հրապարակի վրա կանգնեցրած են 6 բատալիօն և 3 էսկադրօն։ Պատգամաւորները սկսան ժողովվել առաւօտեան 9 ժամին։ Պալատի նախագահը հիւանդացաւ և չէ կարող կատարել իր պարտականութիւնները։ Պարլամենտի հէնց շէնութեան մէջ-նախագահի կաբինէտի-մինիստրների խորհրդի առաջ կանգնած են 60 ոստիկաններ։ Ահագին ամբոխ, հաւաքված պարլամենտի շէնութեան առաջ, պահում է իրան հանգիստ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Մի քանի լրագիրներում երևացին լուրեր, իբր թէ ֆինանսների մինիստրների-ազնուականութեան բանկի փոխառուներին բաւականութիւն տալու միջոցների և գիւղացիական բանկի միջոցների (տալով փող հողեր գնելու համար) մասին կազմած նախագիծը ենթարկվեց ամբողջովին փոփոխման պետական խորհրդում. այդ լուրը սխալ է. հիմնական կէտերում նախագիծն ընդունված է, որ ներկայացրել է ֆինանսների մինիստրը, բայց մտցրված է մի քանի լաւ փոփոխութիւններ, որ արուած էին կոմս Վիտտէի և Կոկօվցեվի կողմից։

ՉԻՏԱ, 6 փետրվարի։ Նահանգապետը և փոխ-նահանգապետը գեներալ Րէնէնկամֆի հրամանով հեռացրված են պաշտօնից իրանց անգործունէութեան համար։ Կատարվում են բազմաթիւ ձերբակալութիւններ երկաթուղային գծի վրա։ Քաղաքում ձերբակալված են ի միջի այլոց քաղաքագլուխը, արքունի պալատի կառավարչի պաշտօնակատարը, երկրորդ զօրաբանակի գլխաւոր գանձապահը, հարկերի տեսուչը, մի բժիշկ և գիւղացիների երեք առաջնորդներ։ Դրանց մեծ մասը ազատ են թողել 3 օրից յետոյ։ Սմիրնովի անճնակ տան մէջ գտնված են զէնքի պահեստ—3000 վինտօվկաներ։ Ձերբակալածներից շատերին գեներալ Րէնէնկամֆը ենթարկեց բանտարկութեան բանտի մէջ։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Նահանգապետի հրամանով փակված է քաղաքային ընկերութեան ձեռքով հրատարակվող—սահմանադրական-ռամկավարական օրգան «Ուրալսկի Կրայ» օրաթերթը։

ՄԻՏԱՎԱ, 6 փետրվարի։ Գեներալ Վօնդի թռուցիկ խումբը, զինված մարդկանց յարձակումների շարունակվելու առթիւ—հրատարակել է մի յայտարարութիւն, որով պատասխանատւութեան է ենթարկում շրջանի ազգաբնակութիւնը, որ կը հարկադրէ յանձնելու այնպիսի մեղաւորներին, որոնք չեն կարող անյայտ մնալ բնակիչների համար։ Եթէ բնակիչները մեղաւորներին չեն տալ, այն ժամանակ ամբողջ շրջանը կը պատժվի հազարների տուգանքով, որի չը վճարելու դէպքում—կը վճռվի վիճակով, բնակիչներից որևէ պահանջել ամբողջ կայքը—ծածկելու համար դրված տուգանքը։

ԼՕՆԴՕՆ, 6 փետրվարի (Րէյտէր)։ Պարլամենտը փակված է Էդուարդ թագաւորի գահական ճառով։

ԵԼԻՍԱՎԷՏԳՐԱԴ, 6 փետրվարի։ Զեմստվային անակնկալ ժողովը հակառակ խօսեց, որ գիւղացիական բանկի հետ միասին գործելու դէմ, մասնաւոր հողատէրերից հող գնելու վերաբերմամբ, և ընդունեց, որ փոխառութիւնների տոկոսը անհրաժեշտ է կրճատել մինչև $3^1/_2$-ի և բանկի վնասները անցնել ընդհանուր պետական միջոցներին։

ՌՈՒՄԱՆ, 6 փետրվարի։ Կողոպտիչները ներս խուժելով գանձատուն, չը կարողացան կոտրել գանձատան արկղը, որը գցված էր՛ անտառ և գտնված է ամբողջ։ Զեմստվային արկղի փողերը գողացված են։

ԲԷԼԳՕՐՕԴ, 6 փետրվարի։ Նախընտրական ագիտացիան սկսվեց։ Սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան քչւոր խումբը անց է կացնում իր թեկնածուներին, աշխատելով ծանօթացնել նրանց ազգաբնակութեան։

ԿՕՆԷՎ, 6 փետրվարի։ Փակված է աւելի քան 30 տարի գոյութիւն ունեցող քաղաքային գրադարանը։ Գրադարանապետը և անդամները ձերբակալված են։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գոլովին, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏԵՆԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$8^1/_2$—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Դ. Գ. ՅԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱՐԵՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—$7^1/_2$ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին հ և էլեկտրո-բուժութիւն։
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱԻԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼԶԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՅԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից։
(չ. ու.կ.) 35—100

Բ Ժ Ի Շ Կ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կաքետսկայեւս փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կախետսկի փողոցից № 2,
(ա. օ.) 85—300

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը, Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տէլէֆօն № 791։ (ա. օ.) 61—150

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 47—100

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեվիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 46—100

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե.ռ.)40—13

Բ Ժ Ի Շ Կ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը։
Վելեամինօվսկայա փողոց, № 22, Նաւտիկովի տանը։
(ե. հ. շ.) 15—13

Լոյս տեսաւ նոր գիրք
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի։ Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արկածեալների օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկեվիչի փողոց, № 13։ (հ.կ.ե.) 6—29

ԼԷՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կոպ.։
Դիմել՝ «Գուտտէմբէրգ» գրախանութը, Թիֆլիս. նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր։ 6—15

Լոյս տեսաւ
ԲԷԲԷԼԻ
Կնոջ ներկայ եւ ապագայ դրութիւնը
Թարգ. ռուսերէնից օր. Սօֆիա Շահնազարեան
Գինն է 10 կոպ.
Դիմել գրավաճառներին։ 3—3

Լոյս տեսաւ ՀԱՈՒՊՏՄԱՆԻ
«ՋՈՒԼՀԱԿՆԵՐ»-ի
հայերէն թարգմանութիւնը, 106 երես, գինը 40 կ.։ Դիմել՝ Москва, контора Бр. Джамгаровыхъ, С. Артемьевой. 5—5

Այն հային, որին յունվարի 10-ին Թիֆլիսի կայարանում միամտօրէն հաւատացի չեմօդանս և կորցրի, խնդրում եմ գոնէ այնքան ազնիւ լինի, որ միջի եղած թղթերս ու դօկումէնտներս (շրով կապած) ուղարկի ինձ այս հասցէով. Баку, Каспійское Товарищество, Егiазарову.

ՏԻԿԻՆ ՅՕՐՏԱՆՍ ԴԱՒԹԵԱՆՑ
Շվէյցարուհի, դիպլօմով—տալիս է ֆրանսերէնի դասեր՝ խօսակցութիւն, քերականութիւն՝ գրականութիւն։ Մէթօդ Բերլից։ Գերմաներէնի և անգլերէնի խօսակցութիւն։
Հասցէն՝ Гудовичъ 6, домъ Питоева.

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը.	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 17 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը. . . .	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը. . . .	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը.	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

„ԸՆԿԵՐ“
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԳԻՐ, ԼԻԱԿԱՏԱՐ ԾՐԱԳՐՈՎ

«Ընկերի» նշանաբանն է հաստատել երիտասարդ սերունդի ինքնակրթութեան ու ինքնաշխատութեան գործին, այն ուղղութեամբ, որ բաղդյապէս ու մտաւորապէս ընկճված, բայց ինքնէ աշխատասէր ու քաջ ձգտումներ, հայ ժողովրդից յառաջ գայ մի անպայման լուսամիտ ու քաղաքակիրթ հասարակութիւն, որը ոչ միայն կարողանայ ստեղծել իր համար մի արժանաւոր ու վայելուչ դրութիւն, այլ և կարողանայ բարոյական ու մտաւոր լոյս սփռել հարևան-ընկեր ժողովուրդների մէջ և այսպիսով ծառայել իր հանրամարդկային բարձր կոչման։ Կարճ ասած՝ «Ընկերը» յառաջ է ձգտելու այն ճանապարհով, որ ընդգծել են «Հիւսիսափայլը» ու «Մշակը»։ Սկսելով փոքրից, մենք մեր բոլոր ջանքը գործ ենք դնելու, որ «Ընկերը» անընդհատ կատարելագործվի՝ թէ ներքուստ և թէ արտաքուստ։ «Ընկերը» ունենալու է նոյնպէս օտարազգի գիտնական ու հրապարակախօս աշխատակիցներ։

Տարեկան բաժանորդագինը Թիֆլիսում ու Անդրկովկասի մեծ քաղաքներում (ուր մենք գործակալութիւն ունենք), առանց փոստի՝ 3 ր. փոստով՝ 4 ր. արտասահման 5 րուբլի։ Ամսական բաժանորդ չէ ընդունվում։ Բաժանորդագրւողը իսկոյն ստանում է բոլոր լոյս տեսած համարները։ Մի ջոց չունեցողը կարող է մաս-մաս վճարել։ Յայտարարութիւնների համար շատ մատչելի գին է վերցնվում, միայն թէ չեն ընդունվում այնպիսի յայտարարութիւններ, որոնք մտաւոր ու հասարակական կեանքի հետ մօտաւոր կապ չունեն։ Սգային յայտարարութիւններ ընդունվում են միայն այն դէպքում, երբ ննջեցեալը մի որևէ դեր է խաղացել հասարակական կեանքի մէջ։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Ингеръ». Խմբագիր-հրատարակիչ՝ Սեդրակ Թառայեանց։ (ե.կ.կ.) 1—3

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
„ՅՈՅՍ“
Գեղարուեստական, գրական, ժողովրդական պատկերազարդ շաբաթաթերթ

Տարեկան բաժանորդագինն է Թիֆլիսում՝ 3 ր., կէս տարվան 1 ր. 50 կ., ամիսը 30 կ.։ Ռուսաստանում՝ 4 ր. կէս տարվան 2 ր., ամիսը 40 կ.։ Արտասահմանում 10 ֆրանկ։ Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюстрированнаго журнала «Уйсъ», Сурпъ-Нишанская ул. № 11. Թիֆլիսում բաժանորդ են գրվում խմբագրատանը կամ Արքունական թատրօնի դիմաց պ. Բ. Նաւտիկեանի «О Бонъ-Марше» մագազինում։

Առաջին համարներից կը սկսվի տպագրվել «Անիի կործանումը» պատմական վէպի բ. մասը։ Նոյն գրքի ա. մ., տպագրված Պարիզում, կը ստանան մեր տարեկան բաժանորդները անցած յունվար և փետրվար ամիսների փոխարէն։

Յոյսը հրատարակվում է յուսահատ, ճնշված և անօգնական մարդկանց համար։ Նա պիտի լինի ապաւէն պորտաբոյծ ձրիակերներից, հաստավիզ հարստահարողներից հալածուածներին, տանջուածներին և արիւնաքամ եղած անհատներին։ Նա պիտի աշխատի փրկութեան խարիսխ լինել այս յուսաբէկ կեանքի փրփրադէզ և լեռնացած ալիքներից խորտակվող նաւերին, միջոց տալով նրանց հասնել անքոյթ ապաստան. և նա պիտի ներշնչէ վհատուածներին հաստատուն հաւատ դէպի ինքնավստահութիւնը ու անննենգ մաքից բղխած սուրբ սէր դէպի իր նմանը։

Հաւատ, Յոյս և Սէր, այդ պիտի լինի մեր նշանաբանը և այդ ուղիով մենք պիտի ընթանանք առաջ և՛ ոգևորվենք և ոգևորենք։

1—2 Խմբագիր-Հրատարակիչ՝ Բագրատ Այվազեանց

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
1906 թ.
„ՄՈՒՐՃ“
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VI տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը
Ռուսաստան եւ Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր.,
Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.),
ՀԱՏՈՎ ՀԱՄԱՐԸ ՄԻ ՌՈՒԲԼԻ

Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբլի։ Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 րուբլի Ռուսաստանում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց տ. № 12)։
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».
«Մուրճի» գործակալներ.
Աստրախան—Գ. ք. Մկրտումեան։
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և «Сотрудникъ» գրավ.
Բալախանի—բժ. Ք. Օհանեան։
Բիբի-էյբաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան։
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան։
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սոչի—պ. Արամ Յակոբեան (Սեծովեզերեայ շրջան)։
Սամարկանդ—Ռ. ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր)։
Սիմֆերօպօլ—պ. Նիկ. Հայրապետեան։
Թիֆլիս—«Գուտտէնբերգ», «Կենտրօն.», «Զ. Գրիգոր. գրավ. և «Հերմէս» տպ.
Վլադիկավկազ—Յ. ք. Սաւիկեան (Հիւս. Կովկասի համար)։
Թաւրիզ—Բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և պ. Հ. Պանիրեան։
Եգիպտոս—դօկտօր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա)։
Էնզէլի—պ. Գ. Մէլիք-Աբրահամեան։
Նոր-Ջուղա—պ. Տիգրան Աբգարեան։
Թէհրան—պ.պ. Ալէքսան Թումեանց և Լ. Բաբայեան։

1906 թւականի նոր բաժանորդները կը ստանան 1905 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրիաբար։ 7—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ Ե. ԹՈՓՉԵԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ
ԼՈՅՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ 1906 Թ.
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

I. եր. Օրացոյց—կազմեց Ն. ք. Նիկողոսեան. ընտիր մաքեր. առածներ. հանելուկներ, շուտասելուկներ II, երես. 1) Ոսկի դարի շուրջը—Սաքի, 2) Նշմարներ Հայաստանի աշխարհագրութիւնից—Մ. Վ, Քաջա-ձ բունու, 3) Օրվայ հարցեր—Բժ. Ա. Բուդաղեանի, 4) Ինչպէս օգնել կարծեցեալ մեռածներին բժշկ. Բ. Նաւասարդեանի, 5) Առողջապահական գիտելիքներ—Դ-ր Բեկլամի, 6) Կինը և ապամարդը—Տիկ. Հրանոյշի, 7) Հրատապ հարցերի շուրջը—պրոֆ. Վ. Զոմբարտի, 8) Քաղաքատնտեսական զրոյցներ—Ե. Թոփչեանի, 9) Ինչպէս են խարդախում մեր սնունդը—Քիմիկոս Կ. Սարգսեանի, 10) Ինչպէս են խմորեղէններ պատրաստում—Մօլօխով եղի, 11) Ինչպէս են քաղցր խմիչքներ պատրաստում, 12) Երեխաներին ինչով պէտք է կերակրել—Դոկտ. Կ. Փաշայեանի. 13) Տեքսիմ և տերսիմցիներ—Անդրանիկի. 14) Եւրոպացիների կարծիքը հայերի մասին—Ե. Թ., 15) Հանրաս կենդանիներ—Վ. Լունկեւիչի, 16 Զարմանալի բոյսեր—Ա. Քիշմիշեանի, 17) Կայծակ և էլեկտրականութիւն— Վ. Լունկեւիչի, 18) Հողը և նրա տեսակները—Գ. Ղազարեանի, 19) Ինչպէս պէտք է հաւ պահել—Բօմէրի, 20) Հոգեշահ զրոյցներ—Պետրով քահ., 21) Թիւրքահայերի վարչական կազմը, 22) Րաֆֆու յիշատակարանից, 23) Տարօրինակ գիւտեր, 24) Գիտական խաղեր. 25) Թուաբանական խաղեր ու խնդիրներ, 26) Ընտիր հառաչածներ, 27) Հայկական պատմ. էջերից, 28) Օգտակար խորհուրդներ, 29) Վանայ երգերից, 30) Զուարճալի հառաչածներ, 31) Հետաքրքրական, 32) Ժողովրդական երգերից. 33) Աշուղական հարցումներ, 34) Բանաստեղծական նշմարներ, 35) Նմուշներ Օսմ. բանաստեղծութիւնից, 36) Շեծաղի աշխարհից, 37) Որոնք են մարդու 3 պարտականութիւնները, 38) Րաֆֆու զրուածքներից ո՞րն է ամենալաւը, 39) Ի՞նչ է երջանկութիւնը և ինչպէս գտնել նրան, 40) Այլ և այլք։

Տարակ «Ռուսահայ խմբագիրներ» առանձին յաւելուած գրքոյկ «Ժողովածու» (1. Արձակ բանաստեղծութիւններ Ա. Ահարոնեանի և Վ. Փափազեանի։ 2. Նմուշներ վրաց գրականութիւնից։ 3. Մրցանակաբաշխութիւն)։ ՄՐՑԱՆԱԿ 50 կտոր գիրք։

Պատի օրացոյցի գինը 50 կոպ.։

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Օրացոյց Հայրապետ. ամեն. հայոց. Ազգային հաստատութիւններ.—Ն. ք. Նիկողոսեանի. Զափեր և նրանց համեմատութիւնը։ Խնայողական գանձարաններ և մարկաներ։ Բանւորների համար։ Իրաւագիտական տեղեկութիւններ։ Մուրհակ, Դրոշմատուրք։ Բնակարանների հարկ։ Պոստ, հեռագիր և հեռախօս։ Երկաթուղի պօստային ճանապարհներ։ Նաւագնացութիւն։ Անցագիր։ Զինւորագրական կանոններ։ Բժշկարան. բժշկարան—Բժ. Լ. Քալանթարեանի. Ինչպէս են խարդախում մեր խմիչքները—քիմիկոս Կ. Սարգսեանի։ Ջուրը—Դոկտ. Ա. Յակոբեանի։ Կեանք և մահ—Բժ. Ա. Բուդաղեանի։ Գիրք և առողջապահութիւն—Դոկտ. Կ. Փաշայեանի։ Մարդու զգեստը—Դոկտ. Զէյլերի։ Շաքարը արբեցողութեան դէմ—Դոկտ. Գոլովինի։ Ժամանակակից հարցերի Շուրջը. Ինչ է բարեգործութիւնը— պրոֆ. Շմօլլերի։ Ազգայնական հարցի մասին —պրոֆ. Վ. Զոմբարտի։ Մրցման հետևանքը տնտեսական կեանքում—Ֆր. Էնգելսի։ Գիտութիւն և ինքնակրթութիւն—Ե. Թոփչեանի։ Դրամագլուխ կամ կապիտալ—պրոֆ. Կարիշեւի։ Ժամանակակից կնոջ վիճակը—տիկ. Հրանոյշի։ Արիութիւն և զանուութիւն—պրոֆ. Մանտեգացցայի։ Ինչ է փողը—Ե. Թոփչեանի։ Գիտական. Օդային ճանապարհորդութիւն—Վ. Լունկեւիչի. Արիւնը։ Բոյսերի կեանքը—պրոֆ. Բօրօդինի։ Երկրագործական խորհուրդներ—Գ. Ղազարեանի, Զուարճալի մաթեմաթիկութիւն (պատկերներով)։ Կենսագրութիւններ. Յով. Աբեգեան, Արղութեանի, Սունդուկեանի, Պռօշեանի և Շիրվանզադէի։ Օգտակար հասցէներ։ Տնային խորհուրդներ։ Գիտական նորութիւններ։ Օգտակար գիտելիքներ։ Հետաքրքրական։ Ցիշտակարան։

Գրպանի օրացոյցի գինը 20 կոպ.։

գումարով գնողների ձեռնտուեղջ։

Սեղանի «Լոյս» օրացոյց հանդէսը մեզնից անկախ պատճառով այս տարի լոյս չէ տեսել։ «ԼՈՅՍ» ՀԱՆԴԷՍԸ ԱՄՍԱԳԻՐ դարձնելու համար՝ դիմում է արուած պատշաճաւոր իշխանութեան։

Դիմել՝ Тифлисъ Мадатовская ул. 5. Е. Топчяну. 6—10

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
1906 թ.
„ԱՇԽԱՏԱՆՔ“
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՒՂԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՈՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ ԱՌԱՋԻԿԱՅ 1906 Թ. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՑ

Ծրագիր՝ 1) Առաջնորդող յօդուածներ քաղաքատնտեսական ժամանակակից խնդիրների մասին. 2) Գիւղական կեանք և կարիքներ. 3) Գիւղական տնտեսութիւն և տեխնիկա. 4) Զեմստվօ և համայնք. 5) Գիւղական դպրոց, դատարան և ոստիկանութիւն. 6) Գիւղական պրօլետարիայի շուրջը. 7) Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8) Թղթակցութիւններ գաւառից. 9) Մամուլի շուրջը. 10) Պատկերներ և զրոյցներ. 11) Հարցեր և պատասխաններ. 12) Շուկայ և տեղեկատու և 13) Յայտարարութիւններ։

«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին։

Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը «Աշխատանքի» ձգտումն է։

Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «Աշխատանքի» թղթակիցներն ու կենդանի ոյժերն են լինելու։

«Աշխատանքին» աշխատելու հրաւիրված են որոշ ուղղութեան մարդիկ։

«Աշխատանքը» վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և գաւառական թղթակիցներին։

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Ռուսաստանի համար տարեկան՝ 4 րուբ. —	Արտասահմանի համար տարեկան 5 րուբ. —
կէս տարին 2 » —	կէս տարին 2 » 50 կ.
ամիսը — — 40 կ.	ամիսը — — 50 »
հատով №-ը — — 10 »	հատով №-ը — — 15 »

Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս. սկզբում 2 րուբլի, մայիսին՝ 1 ր. և սեպտեմբերին՝ 1 րուբլի.

1906 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտ. 20-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան իբրև պրեմիա «Իրաւական պետութիւն» յայտնի գիրքը—80 երեսից։

«Աշխատանքի» բաժանորդագինը ընդունվում է Թիֆլիսում խմբագրատան մէջ, իսկ քաղաքներում նաև բոլոր գրավաճառների մօտ։

Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію еженедѣльнаго журнала „Ашхаданкъ“, Бебутовская ул. д. № 27: Արտասահմանից՝ Tiflis, rédaction de la revue «Aschchatank», Bebutovskaia 27.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Աւոս Աւքանսահան

(ե. ռ.) 7—12

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.